



**Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ**

(Բաճախարական գիտությունների  
բնական)

## ՈՍԿԱՆՅԱՆ ՏՊԱՐԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆԶԸ

Հայկական տպագրության սկզբնավորման օրից անցավ ավելի քան մեկ ու կես հարյուրամյակ, մինչև որ հնարավոր եղավ տպագրել հայերեն Աստվածաշունչը: Այդ հնարավորությունն ունեցավ Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի անվան հայկական տպարանը, որի դերը չափազանց կարևոր եղավ հայոց մշակութային կյանքում:

Խոսել հայերեն առաջին Աստվածաշնչի հրատարակման հանգամանքների, նրա տպագրական առանձնահատկությունների մասին, նշանակում է խոսել առհասարակ Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի անվան հայկական տպարանի, նրա հիմնադիրների, այնտեղ աշխատած մարդկանց գործունեության վերաբերյալ:

Այդ տպարանի աշխատանքը դարագլուխ և ջրջադարձային կետ եղավ հայ տպագրության պատմության մեջ և այսօր նշելով հայերեն Աստվածաշնչի տպագրության 300-ամյակը, հասկանալի է, որ հենց դրանով նշում ենք Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի անվան տպարանի մարդկանց գործունեության հոբելյանը:

Արդ, որո՞նք են Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի անվան կամ, ինչպես ընդունված է այն անվանել՝ Ոսկանյան տպարանի գլխավոր, տարբերիչ առանձնահատկությունները, ո՞րն է նրա դերը հայոց տպագրության և ընդհանրապես հայ մշակութային պատմության մեջ:

### Հայկական մշտապես գործող տպարան

Թվում է, սխալված չենք լինի, եթե ասենք, որ Ոսկանյան տպարանի և այնտեղից լույս ընծայված Աստվածաշնչի աստարեզ գտլը նախապատրաստված էր անցած մեկ և կես դարի ընթացքում հայ մշակութային գործիչների, մանավանդ հայ տպագրիչների եռանդուն ջանքերով ու աշխատանքով:

Ոսկանյան տպարանի ամենակարևոր առանձնահատկությունն այն էր, որ նրա ջնդրհիվ հաղթահարվեցին հայկական տպագրության բնագավառում նախքան այդ եղած մի շարք թուլություններն ու թերությունները, և ստեղծվեց նոր որակի տպարան ու տպագրություն:

Նախքան Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի անվան տպարանի ասպարեզ դալը հայկական տպագրությունը ապրում էր ժամանակով ու տեղով իրարից անշուտ, առանձին տպագրական փորձերի մի շարան: Առանձին խանդավառ մարդիկ այս ու այնտեղ հայերեն որևէ գիրք կամ գրքեր էին տպագրում: Ըստ որում, ընդամենը մեկ կամ մի քանի տարի էր տևում նրանց տպագրական աշխատանքը, որից հետո տիրում էր բավական երկար ընդմիջում:

Հակոբ Մեղապարտի տպարանը վաղեմից կում պետք է աշխատած լինի ամենաշատը երկու կամ երեք տարի: Իրանից հետո տի-

րում է կեսդարյա ընդմիջում, մինչև որ 1556-ից սկսվեց Արգար Դպիրի տպագրական աշխատանքը Վենետիկում ու Կ. Պոլսում, որը տևեց չորս տարի (1565—1569)։ Տասնհինգամյա ընդմիջումից հետո 1584-ին տպագրական ասպարեզ եկան Հովհաննես Տերզնցին և Սուլթանշահ Արգարյանը՝ Հոռմում տպագրելով «Տօմար Գրիգորեան»-ը։ Այս սրանցից յուրաքանչյուրը իրականացրեց ես մեկական տպագրություն՝ Սուլթանշահը դարձյալ Հոռմում և նույն թվականին («Վանոն օրհնութեան»), իսկ Տերզնցին 1587-ին Վենետիկում (Սաղմոսարան)։ Տերզնցու քառամյա տպագրական գործունեությունը էլ վերջակետ է դրվում 16-րդ դարի հայ տպագրիչների աշխատանքին։ Միայն հաջորդ հարյուրամյակի սկզբներին՝ 1616 թվականին, այս անգամ էլ կվիվ քաղաքում մի այլ հայ տպագրիչ է գործի դնում տպագրական մամուլը։ Դա Հովհաննես Քարմատանենցն էր, որի տպագրական գործունեությունն էլ տևում է երեք տարի։

Այնուհետև, 1642—1643 թվականներին Հովհաննես Անկյուրացին Վենետիկում երկու գիրք է տպագրում (Սաղմոսարան և «Յիսուս Որդի»), իսկ Հովհաննես Զուղայեցին 1644-ին Լիվոռնոյում՝ մեկ գիրք (Սաղմոսարան)։

Նախքան Ոսկանյան տպարանի երևան գալը օտարազգիներն էլ դեռևս կանոնավոր կերպով հայերեն գրքեր չէին տպագրում։ Ընդհատ է, եվրոպացիները (Գ. Պոստել, Ամբրոսիոս, Թուրնայդեր, Գետանոս և ուրիշներ) դեռևս 16-րդ դարից սկսած եվրոպական լեզուներով իրենց հրատարակած գրքերի մեջ դնում էին հայերենի նմուշներ, սակայն այդ գրքերը արևելագիտական աշխատություններ էին կամ տառանմուշների հավաքածուներ, և նախատեսված չէին հայերի կամ Հայաստանի համար։ Նույն կարգի էին հայ-լատին բառարանները, եվրոպացիների ձեռքով տպված տարբեր քաղաքներում։

Միայն Հոռմում Հավատի քարոզի (Ուրբանյան) տպարանն էր, որ հայերեն գրքեր էր տպագրում, թեև հաճախ մեծ ընդմիջումներով։ Սակայն այս տպարանն էլ իր հատուկ նպատակադրումն ուներ, այն է՝ կաթոլիկական դավանանքի քարոզը արևելացիների, այդ թվում հայերի մեջ, ուստի և հրատարակում էր միայն այդ նպատակին ուղղակիորեն ծառայող գրքեր։ Հետաքրքրական է նշել, որ այս տպարանը նախատեսված չէր շրջանում չկատարեց Հայաստանին շատ պետքական գրքեր տպագրելու վերաբերյալ հայերի և ռուսների բազմաթիվ խնդրանքներից և ոչ մեկը։

Հայոց եկեղեցուն և ընդհանրապես հայությանը պետքական գրքեր հրատարակող և մշտապես գործող տպարան պետք է լիներ հաշտուր Կեսարացու ջանքերով նոր Զուգում բացված տպագրատունը։ Սակայն ավատական Պարսկաստանի ծայրահեղորեն անտամնաց վիճակը թույլ չէր տալիս, որպեսզի այդ պարզունակ, տնայնագործական աշխատանքը իսկական տպարանի վերածվեր և կարողանար սարքերաբար հրատարակել հայերեն գրքեր ժամանակի տպագրական արվեստի մակարդակով։ Ամենավերջին վանքի այս տպարանը նախքան Ս. էջմիածնի և Ս. Սարգսի տպարանի ասպարեզ գալը կարողացավ լույս ընծայել ընդամենը չորս գիրք՝ Երեքը (Խորհրդատետր, Հարանց վարք, Ժամագիրք) 1641—1642 թվականներին, մեկը (Տօմար)՝ 1647-ին։

Ոսկանյան տպարանը անընդմեջ գործեց շուրջ 25 տարի՝ հրապարակ հանելով մոտ 40 անուն բարձրորակ տպագրություն ունեցող հայերեն գրքեր։ Նախկինում հայկական ոչ մի տպարան այսպիսի երկարակյաց չէր եղել և մանավանդ ոչ մի տպարան հայերեն գրքերի այսպիսի առատ արտադրանք չէր տվել։ Այսպիսով, Ոսկանյան Երեքը և նրա մերձավորներին միայն հաջողվեց ստեղծել շարունակաբար աշխատող և նկատելի քանակով հայերեն գրականություն հրատարակող առաջին հայկական տպարանը։

Էլ ավելի կարևոր է այն, որ Ոսկանյան տպարանի աշխատանքով ընդհանրապես սկիզբ առավ հայկական տնայնագրի գործող տպագրությունը, որն այլևս ընդհատում չունեցավ և հասավ մինչև մեր օրերը։ 1660-ական թվականներին Ամստերդամում հիմնադրված և 1666—1668 թվականներին Աստվածաշունչ հրատարակած հայկական տպարանը ժամանակի մեջ մի առանձին կղզի չեղավ։ Ժամանակի մեջ այդպիսի կղզիներ էին Եվրոպայում կատարված հայկական տպագրության նախորդ բոլոր փորձերը, երբ որևէ հայ տպագրիչ աշխատանքի դադարով ընդհանրապես դադար էր առնում հայերեն գրքերի տպագրությունը։ Ոսկանյան տպարանի աշխատանքի գաղափարով հայկական տպագրությունը այլևս չդադարեց, այլ անմիջականորեն շարունակվեց և ապրեց ուրիշ տպագրիչների ջանքերով։ Այսպես, երբ 1680-ական թվականներին Մարսելում Ոսկանյան տպարանը իր կյանքի վերջին շրջանն էր ապրում, այդ տպարանի երկարամյա աշխատողներից մեկը՝ Մատթեոս Վանանդեցին, գնաց նորից Ամստերդամ և այնտեղ շարունակեց տպագրական աշխատանքը։ 1685-ին տպագրելով մի Շարակնոց՝ Մատթեոսը սկիզբ դրեց Վանանդեցիների

հռչակավոր տպարանի աշխատանքին, որը նույնպես մեծ ծառայություն մատուցեց հայ մշակույթին: Ոսկանյան տպարանի մի այլ աշխատող՝ Թադեոս Երևանցին, Մարսելից գալով Վենետիկ՝ վաճառական Գասպար Սահրատյանի հետ հիմնեց տպարան և 1686-ին սկսեց տպագրել իր հայտնի Ճաշոցը<sup>1</sup>:

Այսպիսով, դեռևս Ոսկանյան տպարանի աշխատանքը Մարսելում լիովին չդադարած Ամստերդամում սկսեց աշխատել վանանդեցիների տպարանը: Ամստերդամում Մատթեոս Վանանդեցու տպագրած Շարակնոցը (1685 թ.), ինչպես և Ժամագիրքը (1686 թ.), բոստ էություն, Ոսկանյան տպարանի վերջին և Վանանդեցիների տպարանի առաջին հրատարակություններն էին:

Հավանականություն կա նաև, որ Ամստերդամում 1680-ական կամ 1690-ական թվականներին գործել է նաև Ոսկանյան տպարանի շառավիղը հանդիսացող մի այլ տպարան: Սակայն այս հարցը վեճերի տեղիք է տվել:

Նախ ուշադրություն է գրավում այն, որ 1669 թվականին Ոսկանի կողմից սկսված մի շարակնոցի տպագրություն ավարտվել է Ոսկանի աշակերտ Պետրոս Զուղայեցու կողմից 1680-ական թվականների մեջ կամ 90-ական թվականների սկզբում<sup>2</sup>, այսինքն՝ այն ժամանակ, երբ Ոսկանյան տպարանը կամ վաղուց Մարսելում էր, կամ փակվել էր: Այս Շարակնոցը տպագրված է ոսկանյան (1664—1665 թթ.) Շարակնոցից բոլորովին տարբեր դիրքով. շատ ավելի մեծադիր է (ոսկանյան Շարակնոցի շարվածքի չափն է 7,5×12, Պետրոսինը՝ 12,5×18, երկուսն էլ միասյուն էջերով): Բացի այդ, Զուղայեցու այս Շարակնոցը, հակառակ ոսկանյանի, նկարազարդ չէ, միայն 2-րդ էջում կա ոսկանյան հրատարակությունների նկարներից մեկը<sup>3</sup>:

<sup>1</sup> Թեև Ոսկանյան տպարանի պատմության մեջ Թադեոս Երևանցին խիստ բացասական դեր է կատարել՝ լրջորեն վնասելով թե՛ տպարանի աշխատանքին և թե՛ Ոսկան վարդապետի հոգեկան ու առողջական վիճակին, բայց մյուս կողմից նա դեռևս Ամստերդամից լինելով Ոսկանյան տպարանի աշխատող, հմտացել էր տպագրական արվեստին, որ և արտահայտվեց նրա ճաշոցի շատ բարձրորակ տպագրության մեջ:

<sup>2</sup> Շարակնոցի հիշատակարանում այդ կապակցությամբ ասված է միայն, որ տպագրությունը ավարտվել է Եղիազար կաթողիկոսի օրոք (1682—1691):

<sup>3</sup> Ալ. Մյասնիկյանի անվ. գրադարանի օրինակում 194 և 195 էջերի միջև կա մի նկար ևս, որը, սակայն, կցված է հետադայում և կապ չունի դրքի տպագրության հետ:

Կա նաև Ամստերդամ անունը և 1698 թվականը կրող մի այլ Շարակնոց, որ տպագրված է Պետրոս Զուղայեցու վերոհիշյալ Շարակնոցի դիրքով միայն երկսյուն էջերով: Այս Շարակնոցի հիշատակարանում իբրև սրբագրիչ հիշված է «Սեհատճի» Սարգիս վարդապետը<sup>4</sup>: Երկու շարակնոցներն էլ տպագրված են Ոսկանյան տպարանի տառերով:

1690-ական թվականներից հրապարակ են գալիս Ամստերդամի անունը կրող նաև ոսկանյան Շարակնոցի դիրքով (7,5×12) և պատկերներով տպված մի շարք շարակնոցներ, որոնք ոսկանյան տպարանի տառերով են տպագրված: Դրանցից են, օրինակ, 1692, 1712 և 1718 թվականներին հրատարակված շարակնոցները<sup>5</sup>, որոնց հրատարակիչները իրենց տպարանն անվանում են «Սրբուհույ Աստուածածնի» (սեհ ս, օրինակ, 1692 թ. Շարակնոցի հիշատակարանը):

Որոշ բանասերներ մի շարք փաստարկներ են բերում ապացուցելու, որ ինչպես Պետրոս Զուղայեցու և Սեհատճի Սարգսի հրատարակած մեծադիր, այնպես էլ այս փոքրադիր շարակնոցները («Սրբուհույ Աստուածածնի») տպագրվել են ոչ թե Ամստերդամում, այլ Կ. Պոլսի (Պեկոդի թաղամասի) կաթողիկական տպարանում<sup>6</sup>: Ընդունելով բերված փաստարկների լրջությունը, մենք հարցը սպառված չենք համարում և առայժմ լիովին անհնար չենք գտնում, որ 80-ական թվականների վերջից կամ 90-ական թվականների սկզբից մինչև 1718 թվականը Ամստերդամում բացի Վանանդեցիների տպարանից մի ուրիշ հայկական տպարան էլ եղած լինի:

Ինչ էլ որ լինի, մի բան անառարկելի է, որ Ոսկանյան տպարանի տառերով լույս ընծայված այդ բոլոր շարակնոցներն էլ, անկախ տպագրավայրից, հրատարակվել են այնպիսի տպարանում, որը Ոսկանյանի ժառանգն է եղել, շարունակությունը:

Հանրահայտ է նաև այն, որ Ոսկանյան տպարանի որոշ աշխատողներ կամ ոս-

<sup>4</sup> Սա Կ. Պոլսի կաթողիկ հայերի ղեկավար Սարգիս Եվդոկիացի Գասպարյան կաթիկոսն է (Սեհատճի անվանեալ):

<sup>5</sup> Ալ. Մյասնիկյանի անվ. գրադարանում և Մաշտոցի անվ. մատենադարանում բացի այս երեք հրատարակություններից կան նաև միևնույն տպարանից դուրս եկած շարակնոցների այլ տպագրություններ, որոնք սկզբից և վերջից պակասավոր են, և նրանց թվականը որոշել հնարավոր չէ:

<sup>6</sup> Տե՛ս Գ. Գալեմբյուրյանի մի հոդվածը, «Հանդէս ամսօրեայ», 1911, էջ 280 և Ա. Ալպոյաշյանի «Տպագրութեան արուեստը և հայք» (ձեռագիր, ՀԽՍՀ ԳԱ գրակ. և արվեստի թանգարան) աշխատությունը:

կանյան խմբի հետ առնչվող մարդիկ այդ տպարանի տառերի ու պատկերների մի մասի (հավանաբար Մարտիկում մնացած) օգտագործմամբ Կ. Պոլսի Պեկոլլի թաղում հիմնել են տպարան, որը մի շարք հրատարակությունների մեջ կոչվում է Ս. Էջմիածնի անվան: Այդպիսով, Ոսկանյան տպարանը դեր է խաղացել նաև հայաշատ Կ. Պոլսում հայկական տպագրությունը դարձացնելու գործում:

### Ոսկանյան ավանդներ

Ս. Էջմիածնի անվան ամատերդամյան տպարանը ոչ միայն սկզբնավորեց հայկական հրատառող տպարանի աշխատանքը, այլև իր մի շարք ավանդները թողեց հայկական հետագա տպագրությանը:

18-րդ դարից սկսած հայկական տպագրության գլխավոր կենտրոնը դառնում է Կ. Պոլիսը: Նրա 17-րդ դարի վերջում այս բաղադրի մեջ երկար դադարից հետո վերսկսվեց հայ տպագրական գործը, այն շատ կողմերից որդեգրեց Ոսկանյան տպարանի ավանդները: 17-րդ դարի վերջում և 18-ի առաջին բառորդում Կ. Պոլսի տպարաններից լույս տեսած մի շարք գրքերի մեջ գտնում ենք ա) Ոսկանյան տպարանի տառերը (կամ նրանց նմանություններ), բ) ոսկանյան հրատարակությունների մեջ գործածված նկարներ (Քրիստոֆել Վան Զիխսմի անվանատառերով) կամ այդ նկարների նոր ընդօրինակություններ, գ) ոսկանյան հրատարակությունների նույնական արտատպություններ:

Անշուշտ, Կ. Պոլիս Ոսկանյան տպարանի ավանդների թափանցմանը նպաստում էր ոչ միայն այն, որ Ոսկանի աշակերտները հաստատվել էին այս բաղադրում և տպագրական գործի ձեռնարկել, այստեղ մեծ դեր էին խաղում նաև ոսկանյան տպարանից լույս ընծայված գրքերը, իրենց բարձրորակ տպագրությամբ:

Կ. Պոլսի շատ հրատարակությունների վրա ենք կարգում, որ նրանք ընդօրինակված են Ոսկանյան տպարանի ընտիր օրինակներից: Նույն բանը կարգում ենք վենետիկյան մի շարք հրատարակությունների վրա: Ոսկանյան հրատարակությունները երկար ժամանակ համարվում էին լավագույն, օրինակելի, և նրանցից կատարված արտատպությունները բարձր էին գնահատվում:

Ուշագրության արժանի է, օրինակ, որ ոսկանյան Աստվածաշունչը երկար ժամանակ համարվում էր այս գրքի տպագրության համար պատրաստի լավագույն բնագիրը, և նրանից են կատարվել հայերեն Ս. Գրքի հետագա հրատարակությունները: Այսպես, Ոս-

կանյան ընդգրի նույնական արտատպություն է 1705 թվականին Կ. Պոլսում հրատարակված Աստվածաշունչը, ուր, ի միջի այլոց, կարգում ենք. «Ի յօրինակս հնոյ տպեցեալ լուսաւոր հոգի Ոսկան վարդապետի յար և նման, ոչ աւելի եւ ոչ նուաղ, սակայն մանր դրով»: Աստվածաշունչի երրորդ տպագրությունը, որ կատարել է Մխիթար Սեբաստացին վենետիկում՝ 1733 թ., նույնպես Ոսկան Երեանցու հրատարակած ընդգրի արտատպություն է, որի մասին զրել է նաև ինքը Մխիթար աբբան. «Իսկ այժմ նոյնն լաւագոյն թղթովք... վերստին տպագրութեամբ ի լոյս ածեալ»: Աստվածաշունչի հաջորդ հրատարակությունները (Ս. Պետրբուրգ, 1817, Սիբիրում, 1817) նույնպես ոսկանյան Աստվածաշունչի արտատպությունն էին:

Ավելի շատ են ոսկանյան Շարակնոցի (1664—1665 թթ.) արտատպությունները: Օրինակ, Կ. Պոլսի ամենանշանավոր տպագրիչներից մեկի՝ Աստվածատուր դպրի հրատարակած Շարակնոցի (1699 թ.) հիշատակարանում կարգում ենք. «ամէնեին Ոսկան վարդապետին շինած շարակնոցին վերայ շարեցի»: Վենետիկի իտալացի տպագրիչ Միքելանջելո Բտրբոնիի տպագրած Սաղմոսարանի հիշատակարանում հայ սրբագրիչը գրում է. «Ի յօրինակէ Ոսկանայ վարդապետի հանգուցելոյ ի Քրիստոս»: 1688 թ. վենետիկում տպված Տօմար-ի մեջ կարգում ենք. «Այս առի օրիակ Ոսկան վարդապետէ» և ուլին:

### Տպաքանակի հարցը

Ոսկանյան տպարանը հայ ասպարոթյան ասպարեղը բերեց մի կարևոր նորություն ևս. այդ հայ գրքերի մինչ այդ աներևակայելի մեծ տպաքանակն էր:

Հիշենք, որ հայերեն գրքերի բազմացման հարցը 16—17-րդ դարերում ուղղակի ճակատագրական դեր ունեն շայաստանի և հայկական գաղութների համար: Հայ գրքի քանակական պակասը լրջորեն վտանգել էր ոչ միայն հայոց եկեղեցու գործունեությունը, այլ ընդհանրապես հայ դպրության զարգացումն ու բուն գոյությունը: Լեոն հենց այդպես էլ գրում է. «Հոգևարքի վերջին րոպեն են էր ապրում և սահակ-մեսրոպյան ժառանգությունը՝ հայոց գրականությունը», «Հայը մոռացել էր իր գրքերը»: Այդ ժամանակաշրջանում հայ գրքի պակասի մասին կան մի շարք գրավոր վկայություններ. հիշենք Կիլիկիայի Աղարիա կաթողիկոսի հայտ-

Վեո, Հայ գրքի տօնը, Թիֆլիս, 1912, էջ 50, 51:

նի նամակը (1585 թ.), դրված Հռոմի պապին, ուր լուրջ գանգատ կա Աստվածաշնչերի պակասի վերաբերյալ. «Ի յամենայն ազգս հայոց, որ է շատ եւ բազում ճորով թէ գտուի Ի (20) աստուածաշունչ ընդ ամենն. եւ կու նստի գինն ԲՃ կամ ԳՃ Ֆլորինի մէկն եւ չի գտուիլ եւ յոյժ պիտանի է վարդապետաց եւ հայրապետաց եւ քահանայից»<sup>8</sup>:

Հնատիպ գրքերի հիշատակարանների մեջ ևս հանդիպում են շատ գանգատներ հայ գրքի պակասի վերաբերյալ: Հիշենք Հովհաննես Անկյուրացու Սաղմոսարանի (1642 թ.) հիշատակարանում ասվածը. «տեսանէի զպակասութիւն գրեանց ազգիս Հայոց»<sup>9</sup>: Նույնն ասում է նաև ինքը Ոսկանը՝ բացատրելով իր Եվրոպա գնալը և տպագրութեամբ զբաղվելը. «Տեսանելով իմ զպակասութիւն ազգին մերոյ հայկազնեայց ի կողմանէ ամենից գրոց»:

Հայ գրքի քանակական պակասը չկարողացան վերացնել անջատ-անջատ, կարճ ժամանակով գործող նախառականյան շրջանի հայ տպագրիչները: Նրանց տպագրած գրքերը ընդամենը մի քանի կամ միայն մեկ անուն էին լինում, որոնց տպաքանակը կազմում էր երկու, երեք կամ չորս հարյուր օրինակ: Դրանով, հասկանալի է, որ հնարավոր չէր վերացնել մեսրոպատառ գրքի պակասը:

Ոսկանյան տպարանը հայ գրքի տպաքանակը միանգամից հասցրեց մի քանի հազարի: Տպարանի հիմնադիր Մատթեոս Մարեհին իր աշխատանքի առաջին օրերից մտադրվել էր տպագրել 1200 օրինակ, «Յիսուս Որդի» և 2000 օրինակ Սաղմոսարան<sup>9</sup>: Ավետիս Ղլիճեցը և Կարապետ Անդրիանագին այդ տպարանից լույս են ընծայում 1662 թվականին 2700 օրինակ Սաղմոսարան<sup>10</sup>, իսկ 1663 թվականին՝ 3000 օրինակ Ժամագիրք<sup>11</sup>: Ոսկանի Աստվածաշունչը պետք է տպագրված լինի 5000 օրինակ ընդհանուր տպաքանակով:

Ս. Էջմիածնի անվան տպարանից նրա հրատարակությունների հիմնական մասը Զմյուռնիայի վրայով գալիս էր Հայաստան. լրջորեն մեղմում այստեղ հայ գրքի պակասը: Պատահական չէ, որ այս տպարանի հրատարակությունների զգալի մասը շատ տարածված են եղել Արևմտյան և Արևելյան Հայաս-

տանում: Օրինակ, ոսկանյան Աստվածաշունչը ամենից տարածվածն է եղել այս գրքի բոլոր հրատարակությունների համեմատ: Այժմ էլ այն հեռու է հազվագյուտ հրատարակություն լինելուց. նրանից հետո լույս տեսած ոչ քիչ գրքեր վաղուց խիստ հազվագյուտ են դարձել, իսկ ոսկանյան Աստվածաշնչի բավական օրինակներ կարելի է գտնել Հայաստանի գլխավոր գրադարաններում (օրինակ, Մաշտոցի անվ. մատենադարանն ունի 12 օրինակ, Ալ. Մյասնիկյանի անվ. գրադարանը՝ 7 օրինակ):

### Ոսկանյան հրատարակությունները և նրանց արժեքը

Երեք քաղաքներում (Ամստերդամ, Լիվոռնո, Մարսել) գործած Ոսկանյան տպարանից լույս ընծայված գրքերին ծանոթանալով՝ դժվար չէ նկատել, որ ըստ բովանդակության նրանք երկու բնույթի են՝ կրոնական-եկեղեցական և աշխարհիկ: Թեև, պետք է ասել, որ գրքերի օգտագործման տեսակետից երբեմն այս բաժանումը պայմանական է թվում: Օրինակ, ճիշտ է, որ ամենից առաջ եկեղեցու կարիքների համար են հրատարակված, ասենք, Աստվածաշունչը, Նոր կտակարանը, սաղմոսարանները, Ժամագրքերը, Շարակնոցը, տոնացույցները, տոմարները, սակայն չպետք է մոռանալ նաև, որ այս գրքերը հայություն մեջ ամենուրեք կարդացվում էին նաև աշխարհականների կողմից: Օրինակ, Սաղմոսարանը մայրենի լեզվի դասագիրք է եղել հայոց դպրոցներում, հայտնի է նաև, որ այդ գիրքը, ինչպես և փոքրագիր Ժամագիրքը, պահում էին իրենց մոտ և սիրում էին կարդալ հայ վաճառականները: Հայերի մեջ շատ են կարդացել նաև Նոր Կտակարանը, մանավանդ ավետարանները: Շարակնոցն էլ ընթերցանության գիրք է եղել հայ գյուղացին անգամ ազատ ժամերին սիրելի կարդալ շարականներ: Տոնացույցները, պարզատոմարները նույնպես օգտագործվել են թե՛ գյուղական, թե՛ քաղաքային հայ բնակչության մեջ: Ոսկան վարդապետի Ժամանակներից սկսած այս գրքերի քանակը զգալիորեն մեծացավ և հասկանալի է, որ մեծացավ նրանց ընթերցողների քանակը: Աստվածաշնչի ամբողջական մատյանն անգամ գաղարեց հազվագյուտ գիրք լինելուց, այն էլ թափանցեց առանձին հայ ընտանիքներ:

Սակայն չնայած այս ամենին, ըստ բովանդակության, պարզ է, որ կրոնական-եկեղեցական գրքերը տարբեր են աշխարհիկ գրքերից, և Ոսկանյան տպարանի մի կարևոր առանձնահատկությունն էլ այն էր, որ զգալի քանակով լույս ընծայեց նաև զուտ աշ-

<sup>8</sup> «Հանդէս ամսօրեայ», 1914, էջ 10:

<sup>9</sup> Սաղմոսարան. Ամստերդամ, 1661—1662, հիշատակարան (Գ. Զարբանալյան, Հայկական մատենագիտութիւն, Վենետիկ, 1883, էջ 599—601):

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Ժամագիրք. Ամստերդամ, 1662—1663, նախաբան (Գ. Զարբանալյան, Հայկական մատենագիտութիւն, էջ 223):



խարհիկ բովանդակության դրբեր: Անշուշտ, հայ հին տպագրիչները նախքան Ս. էջմիածնի տպարանն էլ հրատարակել են աշխարհիկ գրքեր: Հայ տպագրությունը սկզբնավորվեց միաթամանակ հոգևոր և աշխարհիկ գրքերի տպագրությամբ, Հակոբ տպագրիչը և Արգար Դպիրը պատարագատետրերի և ժամագրքի հետ լույս ընծայեցին տաղարաններ, բժշկարաններ ու բերականություն: Հայ տպագրության այս երկու ռազմիրաններից հետո զուտ աշխարհիկ բովանդակության գրքեր տպագրելու փորձեր չարվեցին (եթե չհաշվենք այն տեղեկությունը, ըստ որի Հովհաննես Քարամտանենցը կոչվում մի բժշկարան է տպագրել): Ոսկան Երևանցու և նրա մերձավորների շնորհիվ հայ աշխարհիկ գրքի տպագրությունը դարձավ օրինաչափ և անընդհատ:

Իրենց բնութով բազմազան են և հետաքրքրական Ոսկանյան տպարանից դուրս եկած աշխարհիկ գրքերը: Ոսկանի հեղինակած Քերականությունը (հրատ. 1666 թ.) հետաքրքրական է նրանով, որ առաջին անգամ հայ տպագրիչը լույս է ընծայել սեփական գրչի արդյունքը: Խորենացու «Աշխարհացոյց»-ի<sup>12</sup> (1668 թ.) տպագրությամբ հիմք էր դրվում հայ մատենագիրների գործերի հրատարակությանը, որ հետագայում ծաղկման հասնում: Աղվեսագրքի հրատարակությամբ առաջին անգամ տպագիր դարձան հայ միջնադարյան աշխարհիկ գեղարվեստական արձակի հրաշալի նմուշները (մինչ այդ տպագրվել էին միայն միջնադարյան շափածոյի նմուշներ): Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ի հրատարակությունը (1669 թ.) ուղադրվել է ոչ միայն նրանով, որ դա եղավ հայերեն առաջին տպագիր պատմագրությունը, այլև այն բանով, որ առաջին անգամ հայ հեղինակի կենդանության օրով լույս էր տեսնում նրա աշխատությունը: Շատ ավելի կարևոր էր «Արհեստ համարողութեան» անունով գրքի հրատարակությունը (Մարսել, 1675 թ.): Նախ սա հայերեն տպագրված առաջին մաթեմատիկական գիրքն է: Սակայն էլ ավելի կարևոր է այն, որ այդ գրքի լեզուն աշխարհաբար էր: Այսպիսով, առաջին աշխարհաբար գրքի հրատարակության պատիվը նույնպես Ս. էջմիածնի տպարանին է պատկանում:

«Արհեստ համարողութեան»-ի առաջարանն ու վերջարանը գրաբար են, իսկ բուն բնագիրը՝ աշխարհաբար: Ըստ որում, գործ ունենք

ոչ թե որևէ հայ գավառաբարբառի հետ, որպիսիք այն ժամանակներում գործածվում էին հայ վաճառականների նամակներում, մուրհակների, տարբեր ուղեգրությունների և այլ գրվածքների մեջ, այլ գրականացված բարբառի, այսինքն գրական աշխարհաբարի հետ: Հետաքրքրական է նաև նշել, որ այդ լեզուն ոչ արևմտյան և ոչ էլ արևելյան աշխարհաբար է, այլ ուղղակի հայ աշխարհաբար: Օրինակ, բայերի ներկան ամեն դեպքում կազմվում է կ-ով (և ոչ արևելահայերենի ռւմ-ով), որ արևմտահայերենի հատկություն է, բայց ակնբախ է նաև արևելահայերենի ընդհանուր երանգի առկայությունը: Ահա մի նմուշ «Արհեստ համարողութեան»-ի լեզվից. «Երբ որ կսկսումք մեկ թիւ մի բաժանել, յառաջ իմանալ պիտինք, թէ բաժանող թիւն քանի անգամ բաժանելու թվի մէջն կու դտվի, յետոյ էն դուրս եկած թիւն գրել պիտինք բաժանելու թվի աջ կողմն, մեկ ծուռ խաղէ մի յետ: Բայց զգուշ պիտինք կենալ, որքան զինքն ավելի չի լինի: Մեկ էլ էնչափ չի լինի որչափ որ բաժանող գիրն բաժանելու թվի մէջն կու դտվի, այլ քիչ մի պակաս լինի...»:


Այս գիրքը տպագրվել էր իբրև թվաբանական-հաշվապահական ձեռնարկ հայ վաճառականների համար: Այն թարգմանություն է իտալերենից: Բայց ո՞վ է թարգմանիչը, ո՞վ է առաջին աշխարհաբար գրքի լեզվի հեղինակը: Գրքի տիտղոսաթերթին եղած Ի. Յ. Հ. Բ. Տ. Պ. տառերը ենթադրել են տալիս, որ թարգմանիչը Հովհաննես Կոստանդնուպոլսեցին է (Հոլովը)<sup>13</sup>, որը այդ ժամանակ շատ թարգմանություններ էր անում և կապված էր Ոսկանյան տպարանի հետ իբրև գրաքննիչ (Մարսելի Ոսկանյան տպարանից լույս է տեսել նրա «Համառոտութիւն ճարտասանականի արուեստի» աշխատությունը—1674 թ.): Երբ համեմատում ենք «Արհեստ համարողութեան»-ի լեզուն Հովհաննես Հոլովի կողմից աշխարհաբար շարադրված «Պարզաբանութիւն հոգեհուազ սաղմոսացն» գրքի (Վենետիկ, 1687 թ.) լեզվի հետ, նկատում ենք, որ ընդհանրությունների հետ կան և տարբերություններ: Դա ինչ-որ չափով հարցականի տակ է դնում թարգմանչի խնդիրը:

#### Ոսկանյան Աստվածաշունչը

Ոսկանյան Աստվածաշունչի տպագրությունը Ս. էջմիածնի անվան տպարանի բոլոր հրա-

<sup>12</sup> Մենք հետևելով հայոց ավանդույթին այս աշխատությունը կոչում ենք Խորենացու անունով, չնայած, որ դրա նկատմամբ առարկություններ կան բանասիրության մեջ:

<sup>13</sup> Հ. Ա. Ղազիկյանը տարակուսելով առաջարկում է այս տառերից Յ. Հ. Բ.-ն բացել այսպես՝ Յակոբ Հոլով Բիսուպանդեան (տե՛ս նրա «Հայկական նոր մատենագիտութիւն»-ը, Վենետիկ, 1909—1913, սյունակ 248):



ՀԱՅՈՒՐ Դ. ԶՈՒՂԱՅԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԵՐԵՋՄԱՆԸ ՄՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ  
ՇՐՋԱՓԱԿԻ ՄԵՋ

տարակուսյունների պսակը եղավ, այդ տպարանի կարողության ամենամեծ արտահայտությունն ու վկայությունը: Հանրահայտ է, թե ինչպիսի դեր է կատարել Աստվածաշունչը քրիստոնյա ազգերի հոգևոր և մշակութային կյանքում: Միջնադարում քրիստոնյա բոլոր ազգերի, այդ թվում հայոց մեջ, այդ գիրքը համարվել է գրքերի գիրք:

Աստվածաշնչի թարգմանությամբ սկիզբ է առել Սահակ-Մեսրոպյան դպրությունը, այն հսկայական նշանակություն է ունեցել միջնադարյան հայ հոգևոր ու մշակութային ողջ կյանքի վրա: Այս իրողությունը կարելի է գիտել միջնադարյան հայ փիլիսոփայության և պատմագրության, մեկնչական և վարքագրական գրականության, իրավագիտության և մատենագիտության, գեղարվեստական գրականության ու նկարչության, քանդակագործության ու ճարտարապետության մեջ: Սակայն մեծ ծավալի և բնագրային մի շարք գծավորությունների պատճառով միջնադարյան Հայաստանում Աստվածաշնչի ձեռագիր ընդօրինակումը չափազանց ծանր գործ էր: Այդ գործն ավելի էր բարդանում մշտական ասպատակությունների ու գաղթների ժամանակաշրջաններում:

Տպագրության զարգացումը Եվրոպայում չէր կարող հայերի ուշադրությունը չգրավել Աստվածաշունչը տպագրությամբ բազմացնելու տեսանկյունից:

Տվյալներ կան ենթագրելու համար, որ Աստվածաշունչ տպագրելու մասին մտածել է դեռևս Արգար դպիրը, որը սակայն իր անմշակ տառերով և պարզունակ տպարանով չէր կարող լրջորեն զբաղվել այդ գործով:

Արգարի գործունեությունից մի քանի տարի հետո, 1585 թվականին, Աղարիա Զուլայեցի Կիլիկիայի կաթողիկոսը Հոռմի պապին գրած վերը հիշված նամակում, գանգատվելով Հայաստանում Աստվածաշնչի խիստ պակասից և բարձր գնից, խնդրում էր Հոռմում հայերեն տպագրել այդ գիրքը: Աղարիա Զուլայեցուն ոգևորել էր մեկ տարի առաջ Հոռմում հայերեն հրատարակված «Տոմար Գրիգորեան»-ը: Կաթողիկոսը Հոռմ է ուղարկել մեկ գրչագիր Աստվածաշունչ և Գրիգոր անունով սարկավագին, որը պետք է օգներ տպագրության գործին: Թե ինչ տպավորություն է թողնում Աղարիայի այս խնդրանքը Հոռմում՝ անհայտ է, հայտնի է միայն, որ որևէ իրական հետևանք այն չի ունենում:

Հայերը շարունակում են Հոռմում Աստվածաշունչ տպագրելու հույսեր փայփայել՝ ժամանակ առ ժամանակ այդ հարցով դիմելով Վատիկանին: 1630-ական թվականներին այդ գործում մեծ եռանդ է ցուցաբերում Զմյուռնիայում Վենետիկի պետության ներկայա-

ցուցչի թարգման Հովհաննես Անկյուրացին (Մուխնոն): Աստվածաշնչի կարևորությունը հայոց մեջ այնքան մեծ էր, որ այս շրջանում հայերը սկսում են Հոռմին ակնարկել մայրենի լեզվով Աստվածաշունչը «հերետիկոսական» Հոլանդիայում տպագրելու հեռանկարի մասին: Անկյուրացու կողմից Վատիկանին արված այսպիսի մի ակնարկ բնութայն նյութ է դառնում կարդինալների խորհրդում: Որոշումը լինում է անորոշ. հայերին հաստատ խոստում չի տրվում գիրքը տպագրելու մասին, բայց չի էլ մերժվում նրանց խնդրանքը, որպեսզի Անկյուրացին ետ կանգնեցնի իր հայրենակիցներին Հոլանդիայում Աստվածաշունչ տպելու մտադրությունից<sup>14</sup>:

Այնուհետև, Հովհաննես Անկյուրացու միջամտությամբ խորհուրդը որոշում է հայերեն նոր տառեր ձուլել և նախ տպագրել հայերեն նոր Կտակարան ու Սաղմոսարան: Սակայն այս էլ չի իրականացվում: Ընդհանրապես Անկյուրացու ջանքերը ապարդյուն են անցնում, եթե չհաշվենք այն, որ նա Վենետիկում մի կերպ գլուխ է բերում մի Սաղմոսարանի և ապա Շնորհալու «Յիսուս Որդու» տպագրությունը:

Նույն այդ շրջանում հայերեն Աստվածաշունչը տպագրության պատրաստելու աշխատանքով զբաղվել է իտալացի հայագետ Պաուլո Պիրոմալին՝ նախ էջմիածնում, Ոսկան Երևանցու հետ, ապա Իտալիայում: Այդ շրջանում էր, որ Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես Խոլը և ապա Զաքարիա Երևանցին առավելագույն էին անում Հոռմում հայերեն Աստվածաշունչ տպագրելու համար:

Ամենն ապարդյուն է անցնում:

Ընդունված է ասել, որ Հոռմում հայերեն Աստվածաշնչի տպագրությունը չի իրականանում սոսկ դավանաբանական գրաքննության և նման պատճառներով: Այդպիսի պատճառներ, անշուշտ, եղել են, սակայն հազիվ թե նրանք վճռական եղած լինեն: Նախ պետք է ասել, որ Հոռմում խոսք է եղել միայն լատինական բնագրին (Վուլգատային) համապատասխանող հայերեն Աստվածաշունչ տպագրելու մասին, մի անգամանք, որ դավանաբանական տեսակետից Հոռմին միանգամայն ձեռնադրել էր Ուշագրավ է նաև այն, որ Հոռմի տրամադրության տակ եղել է այդպիսի հայերեն Աստվածաշնչի ձեռագիր (Պիրոմալիի կազմածը), այն տպագրության պատրաստելու և համապատասխան տառեր ձուլելու վերաբերյալ որոշումներ են եղել, տպագրությունը նախապատ-

<sup>14</sup> «Հանդես ամսօրեայ», 1914, էջ 11—14:

րաստելու աշխատանք է տարվել<sup>15</sup>, և, այնուամենայնիվ, տպագրությունը չի իրականացել:

Դժվար չէ նկատել, որ այլ խոչընդոտների հետ Հոռոմում հայերեն Աստվածաշունչ տպագրելու գործին լրջորեն խանգարել է Վատիկանի տպարանում (որ հետո կոչվեց Ուրբանյան կամ Հավատի քարոզի տպարան) հայերեն այդպիսի մի բարդ բնագիր տպագրելու հետ կապված խմբագրական, սրբագրական և տպագրական հնարավորությունների պակասը: Նախ Ուրբանյան տպարանի ունեցած հայերեն տառերը, նրանց տեսակները 17-րդ դարում թե՛ քիչ էին, թե՛ անհամար՝ Աստվածաշունչ տպագրելու համար: Այնուհետև, որ ավելի կարևոր է, հայերեն Աստվածաշունչ տպագրելուց առաջ Ուրբանյան տպարանը պետք է փորձնական մի շարք հայերեն գրքեր տպագրեր, ըստ որում այդ բանը պետք է անեին հայազգի, բավականին գրագետ նաև շատ համառ ու համբերատար մարդիկ, որոնց պետք էր հմտություն ձեռք բերել բարդ գործին ձեռնարկելու համար: Հայերին տարիների ընթացքում այսպիսի արտոնություններ տալ, հասկանալի է, որ չէր կարող Ուրբանյան տպարանը:

Ուշագրություն է գրավում նաև այն, որ «հերետիկոսական» Հոլանդիայում, ուր չկար կաթոլիկական հսկողություն, և հայերը կարող էին Աստվածաշունչ ցանկացած բնագիրը հրատարակել, այնուամենայնիվ տպագրվեց վուլգատային հարմարեցված հայերեն բնագիր, որը կարող էր դիմանալ կաթոլիկական դրաքննությանը: Եթե ճիշտ է այն տեսակետը, թե հայերը Հոլանդիա դիմելով զլխավորապես կամեցել են ազատ լինել Հոռոմի գրաքննությունից, ապա այդ դեպքում նրանք պետք է տպագրեին հայերեն Աստվածաշունչ ոչ թե լատինականին հարմարեցված, այլ դասական բնագիրը, որը սակայն չարեցին:

Ծշմարտությունն, ըստ երևույթին, այն է, որ Աստվածաշունչի նման մի գիրք հայերեն տպագրելու հնարավորություն Ուրբանյան տպարանը այն ժամանակներում չուներ: Նման բնագիր տպագրելու հնարավորություն չուներ և չէր կարող ունենալ նաև Նոր Զուղայի պարզունակ տպարանը: Հովհաննես Զուղայեցին 1650 թվականին փորձում է սկսել այդ բարդ ու ծանր աշխատանքը, բայց, հասկանալի է, որ մի քանի թերթի տպագրությունից այն կողմ չի անցնում գործը: Միամտություն է կարծել, թե Նոր Զուղայի Աստվածաշունչը չտպագրվեց այն պատճա-

ռով, որ Հովհաննես Զուղայեցին գտնվեց հակառակորդների հետ և հեռացավ: Նույնիսկ ավելի ուշ շրջանում, երբ Պարսկաստանն էլ, կովկասն էլ տպագրական արվեստի տեսակետից շատ ավելի զարգացած էին, հնարավոր չեղավ ոչ միայն Նոր Զուղայում, այլ նույնիսկ էջմիածնում հայերեն Աստվածաշունչ տպագրել:

Մի շարք նախադրյալներ չին պետք այդ գրքի տպագրության համար: Նախ անհրաժեշտ էր ունենալ անընգմեջ գործող մի հայկական տպարան, տպագրական բարձր արվեստի հասած որևէ երկրում, ինչպես և պետք էր այդ տպարանում ունենալ հայազգի, բարձր գրագիտության տեր նաև համբերատար, համառ ու մանավանդ հայրենիքին լիովին նվիրված տպագրիչներ: Այդպիսին եղավ Ոսկանյան տպարանը Ամստերդամում:

Դա Հայաստանի, էջմիածնի տպարանն էր հանգամանքների բերումով պանդխտության մեջ ընկած: Այդ հանգամանքները Հայաստանի քաղաքական ողբերգական վիճակն էր և ծայրահեղ հետամնացությունը:

Այստեղ փոքր-ինչ երկար կանգ առանք հայերեն Աստվածաշունչի տպագրության նախադրյալային պարզ պատկերանա Ոսկան Երևանցու և նրա օգնականների կատարած գործի մեծությունը:

Պետք է ասել, որ հենց սկզբից մեծ համառություն ու տոկունություն հարկ եղավ ցուցաբերել Ամստերդամում հայկական տպարան ստեղծելու համար: Այս տպարանի երախայրիքի՝ «Յիսուս Որդու» հիշատակարանը կարդալիս, շատ պարզ զգում ենք այն համառությունը, որ նախ ունեցել է Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի առաջին առաքյալը՝ Մատթեոս Մարեցին, իր հանձնարարությունը նվիրապալում կատարելու ժամանակ: Վենետիկում նա չի գտնում հարմար վարպետներ ապագրական գործն սկսելու համար, ապա մեկ տարուց ավելի գործին խանգարում է ժանտախտի համաճարակը: Այնուհետև, Հոռոմում Մարեցին նույնպես չի գտնում «վարպետը կատարեալը», ապա նրան խանգարում է այն օրենքը, ըստ որի իտալացի վարպետները իրավունք չունեին տառեր պատրաստել այլազգիների համար կամ տպագրական արվեստը սովորեցնել նրանց: Մարեցին օգնության համար դիմում է բոլոր հնարավոր աստիճաններով՝ մինչև իսկ պապին և կարդինալներին, բայց հաջողություն չի գտնում: Սակայն նա հեռու էր հուսահատությունից և որոշում է այս անգամ բախտը փորձել Հոլանդիայում ու դիմում է Քի գեղեղաշէն, վայելող քաղաքն Ամսթերդամ: Այս-

<sup>15</sup> «Հանդէս ամսօրեայ», 1914, էջ 11—15.

տեղ էլ բազմաթիվ լուրջ խոչընդոտների է հանդիպում «... զանձն առնելով զվիշտս և զտառապանս, դոր յայսքան ժամանակս կրեցաք ի հակառակասիրացն և յոչ կամեցողացն զբարեգոյն գործս ի ձեռաց ալազգաց եւ մանաւանդ մերային չազանց ի սուսառակ կարգաւորաց և յաշխարհականաց թէ ի Վնէտիկ և թէ աստ ի մթրդամ, որք փոխանակ օժանդակութեան զոր պարտն էին, դիմաբանեալ հակառակէին մշտաբար: Բանիւք, գործովք և արդեամբք եւ զառաջարկեալ գործ մեր խափանել ջանային եւ թէ ոմանք բարեպաշտ կամէին օտարք օգնութիւն մեզ առնել, զայն ևս յուսահատուցանէն եւ ապաշաւել տային բարեգործութեան»:

Ծարեցին դիմանում է փորձություններին մինչև վերջ. «մեք ևս ոչ դադարէաք, ոչ թուլանալաք», — գրում է նա: Եվ տպա՝ «ի ցայգ և ի ցերեկ մահու չափ աշխատելով»՝ դարաբաղդի սարկավազը ի վերջո կարողանում է ստեղծել փափագելի տպարանը: Զորս տարի և ութ ամիս են տևում փողից, նյութական որևէ եկամուտից զուրկ Ծարեցու մաքառումներն օտար երկրներում, մինչև որ նրան հաջողվում է էլիզիերների հայտնի ապարանի վարպետ Քրիստոֆել Վան Դիկին պատրաստել տալ երեք տեսակ հայերեն տառեր, ինչոր տեղից գնել նկարիչ Քրիստոֆել Վան Զիլսմի փայտափորագրությունները Ս. Գրեթի թեմաներով և 1660 թ. դեկտեմբերին սկսել «Յիսուս Որդու» տպագրությունը: Սակայն դրանից մոտ երկու ամիս անց Ծարեցին մահանում է իր հիմնած տպարանի անդրանիկ արտադրանքը շտեմած: Ոմանք կարծում են, թե Ծարեցին ծեր մարդ է եղել և միայն գրանից է մահացել: Ծարեցու տարիքի մասին որևէ ստույգ տեղեկություն մեզ հայտնի չէ<sup>16</sup>, բայց եթե նա տարիքով մարդ էլ եղած լինի, մենք, այնուամենայնիվ, հիմք ունենք մտածելու, որ զառամյալ չի եղել (կաթողիկոսը զառամյալ մարդուն դժվար ու ծանր գործով նվրոպա չէր կարող ուղարկել) և մանավանդ հիմք չունենք մտածելու, որ Ծարեցին ծերությունից է մահացել: Մենք գիտենք, որ Ծարեցու կամքը անհողողող մնաց, բայց չէ՞ր կարող արդյոք նրա առողջությունը քայքայված լինել հաղթահարված անասելի դժվարությունների, թրաքում նեղութեանց և անմխիթարութեանց», «ցայգ և ցերեկ մահու չափ աշխատելու» հետևանքով: Արդյոք նահատակ չի՞ եղել կամքով անկոտրում այս հայրենասերը ազգագուտ գործի ճանապարհին: Եվ ահա այդպիսի զոհողության և զոհաբերության գնով ստեղծված տպարանը,

<sup>16</sup> Հռոմեական աղբյուրներում Ծարեցին կոչվում է Ավագ, արդյո՞ք սա նրա տարիքի հետ է կապված:

այնուամենայնիվ, պետք է փակվեր իր երախայրիքը լույս չընծայած, եթե օգնության չհասներ մի ուրիշ զարմանալիորեն հայրենասեր մարդ, որ այն ժամանակներում երկրից երկիր թափառող ջուղայեցի վաճառականներից մեկն էր: Դա առևտրական գործերով Ամստերդամ եկած Ավետիս Ղլիճենցն էր՝ Ոսկան Երևանցու եղբայրը:

Ծանր հիվանդ պառկած, պարտքատերերից հալածական Ծարեցին Ավետիսից գրամ է խնդրում տպարանը փրկելու համար: Նա ջուղայեցի վաճառականին շահագրգռելու նպատակով առաջարկում է տպարանից եկող շահը բաժանել իրենց երկուսի միջև: Իր մահվան դեպքում ողջ տպարանը պետք է մնար Ավետիսին իբրև սեփականություն: Ավետիսը մերժում է այս առաջարկը. «Եւ զայս ոչ էառ յանձն Աւետիսն՝ ասելով. եթէ տացես զապաբանդ յիշատակ սուրբ էջմիածնին և սուրբ Սարգսին, լինիմ քեզ ընկեր և տամ զփողս և ես աշխատիմ անձամբս ի տպարանիս որբան եւ կենդանի իցեմ. և զարդինս դրամին իմոյ բաշխեմ վերոգրեալ սրբոյն...»<sup>17</sup>:

Ահա այսպիսի մի նոր, անսպասելի զոհողության մեջ Ավետիս Ղլիճենցը փրկում է նորաստեղծ հայոց տպարանը՝ այն կոչելով Սուրբ էջմիածնի և Սուրբ Սարգսի՝<sup>18</sup> անվան: Ի դեպ, ասենք նաև, որ Ավետիսը հաստատ է մնում իր խոստմանը՝ տպարանի ողջ գոյության ընթացքում (նաև Մարսել տեղափոխվելուց հետո) նյութական օգնություն ցույց տալով նրան:

Ամստերդամյան հայոց ապարանից լույս ընծայված գրքերի հիշատակարաններում մի շարք անգամ հիշատակվում է Ավետիս Ղլիճենցը, իբրև էջմիածնի անվան տպարանի գոյության պատճառ՝ «ղևտիսն, որ պատճառ է եղել այսորիկ գործարանի էջմիածնի լինելոյն»<sup>19</sup>:

Սակայն որքան էլ հայրենասեր լինեք Ավետիսը, նա ի վիճակի չէր տպարանում շարունակել Մատթեոս Դպիրի գործը, քանի որ շատ հեռու էր «բանի սպասաւոր» լինելուց և միանգամայն անհմուտ՝ տպագիր գրքեր ստեղծելու գործում: Ավետիսը դրում է, թե Ծարեցու մահից հետո «որը մնացի Ամէսէրդամ վասն այն, որ սրբագրող ոչ գոյր, բայց

<sup>17</sup> Սաղմոստեան. Ամստերդամ, 1661—1662, հիշատակարան (Գ. Զարեանցալյան, Հայկական մատենագիտութիւն, էջ 600):

<sup>18</sup> Ավետիսը էջմիածնից բացի նկատի է ունեցել Ուշիկ Ս. Սարգիս վանքը, որի վանահայրն այդ ժամանակ նրա եղբայր Ոսկան վարդապետն էր:

<sup>19</sup> Դիւբ պատմութեանց շարադրեալ վարդապետին Աւաքեթլոյ Դավրէժացոյ. Ամստերդամ, 1669, հիշատակարան:

միայն ես ի կարգացող, որ չի խիստ հեմուտ»<sup>20</sup>:

Սրբագրելը, որ այն ժամանակ նշանակում էր նաև համեմատական բնագրի պատրաստելը և խմբագրելը, պահանջում էր բարձր զարգացում և բանասիրական լուրջ հմտություններ, մինչդեռ վաճառական Ավետիսը հեռու էր այդ ամենից: Դա պարզ է դառնում ոչ միայն նրա խոստովանությունից, այլև թողած հիշատակարանի լեզվից, որ Երևանի բարբառն է գրաբարի որոշ տարրերով:

Պարտքատերերից ազատված տպարանը այս անգամ էլ գազարում է աշխատելուց՝ մի գրագետ ղեկավար շունենալու պատճառով: «Ժամանակ մի տարեկուսեալ և պարապ մընացի,— գրում է Ավետիսը,— ես և սահմանք և գործն և մըշակն: Բ (2) ամիս ժամանակ անցաւ...»<sup>21</sup>: Նավերը Ամստերդամից մեկնում են Ջմյուռնիա, Ավետիսը, որ իր առևտրի գործերով էր եկել Ամստերդամ, այդ նավերի հետ պետք է վերադառնար: Բայց նա չի կարողանում լքել տպարանը գրքի անավարտ տպագրություններ: Եվ ահա գործին ոչ «հեմուտ» Ավետիսը սկսում է սրբագրական փորձեր անել. «վախելով այսպէս սրբայորեցի, օրինակն եղի մի կողմ տպագրածն մի կողմ, մին կու նայի օրինակն, մի ի տպագրածն, յորժամ որ սղալ լինէր, կու մեկնի: Այսպէս սրբայորեցի մնացեալ ԺԴ տետրն»:

1661 թվականի մարտի 25-ին Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի անվան հայկական տպարանից վերջապես լույս է տեսնում նրա առաջնեկը՝ Շնորհալու «Յիսուս Որդի»-ն:

Ավետիսը կիսատ տպագրությունն ավարտելով ձոխացնում է տպարանի տառաշարքը նոր տառերով և տպագրում մի փոքրիկ ժամագիրք: Ավետիսը նաև իր եղբորը՝ Ոսկան վարդապետին նամակ էր գրել ամստերդամյան հայոց տպարանի վիճակի մասին, խնդրելով, որ նա դա Հոլանդիա և ղեկավարի տպարանի աշխատանքը<sup>22</sup>:

Ավետիսին նախ շուտափույթ օգնության է հասնում Ոսկանի աշակերտ Կարապետ վարդապետ Անդրիանացին, որ դարձավ հայ հին տպագրության երախտավորներից մեկը: Կարապետը Ավետիսի օգնությամբ տպագրում է մի Սաղմոսարան և մի մեծ ժամագիրք, ապա ձեռնարկում է Շարակնոցի

տպագրության, դրա համար պատվիրելով տպագրական խազեր:

Անկասկած է, որ հենց սկզբից Ամստերդամի հայկական տպարանի ստեղծման հիմնական նպատակը եղել է Աստվածաշնչի տպագրությունը: Այժմ, երբ տպարանը արդեն աշխատում էր, այնտեղ անհրաժեշտ էր մի այնպիսի մարզ ունենալ, որը կարողանար իրականացնել բազմիցս ձախողված գործը: Հակոբ Ջուղայեցին ճիշտ ընտրություն է կատարում: Նա հանձնարարում է Ոսկան Երևանցուն ստանձնել այդ ծանր գործը: Այս ընտրության պատճառը ոչ միայն այն էր, որ Ոսկանի եղբայրը շատ թե քիչ ունևոր մարզ էր և արդեն մասնակից տպարանի աշխատանքին, այլև մանավանդ այն, որ Ոսկան վարդապետը Պառու Պիրոմալիի հետ միասին արդեն երկար ժամանակ աշխատել էր հայերեն Աստվածաշնչի բնագիրը տպագրության պատրաստելու գործի վրա և հմուտ էր այդ բնագավառում:

Մենք չգիտենք Հակոբ Ջուղայեցուն որքանով էին ծանոթ Ոսկանի անձնական արժանիքները, ոչ, իհարկե, նրա բարձր գրագիտությունն ու զարգացումը, որոնք, անշուշտ, հայտնի էին կաթողիկոսին, այլ Ոսկանի մեծ կամքը, համառությունը և նվիրվածությունը աղբի լուսավորության գործին: Բայց փաստ է, որ այս դեպքում էլ ընտրությունը ճիշտ էր կատարվել, չնայած կաթողիկոսի և Ոսկանի միջև եղած որոշ անհամաձայնություններին:

Ոսկան Երևանցին Էջմիածնից Եվրոպա է մեկնում 1662 թվականի սեպտեմբերի 27-ին. «Ելեալ յերկրէ և յազգէ իմէ, դիմեցի ի կողմանս Եւրոպիոյ յաղագս ապման մատենիս այսորիկ աստուածայնոյ և բազմաւ վշտիւ և տառապակրութեամբ եկեալ հասի ի սահմանս Իտալիոյ՝ յերկիրն Թուսկանու, ի քաղաքն Իլիվոնայ»<sup>23</sup>:

Իտալիա հասնելով՝ Ոսկանը անմիջապես սկսում է զբաղվել Աստվածաշնչի տպագրության նախապատրաստմամբ: Նա իր հետ ունեւոր բնագրի իր խմբագրած օրինակը, մահացած եղբոր՝ Հովհաննեսի թողած ոչ մեծ դրամը և կաթողիկոսի հանձնարարականը («Քանզի ես իշխանութեամբ և հրամանաւ վեհափառի կաթողիկոսի...»): Բացի այդ Ոսկանը իր եղբորից՝ Ավետիսից, որն այդ ժամանակ լիվոռնոյում էր գտնվում (դնում էր Ջմյուռնիա), վերցնում է Ամստերդամի տպարանը իրեն հանձնելու մասին դրություն («նորա ձեռագրով իւրով»): Սակայն դրամն, այնուամենայնիվ, քիչ էր գործն ավարտին

<sup>20</sup> Յիսուս Որդի, Ամստերդամ, 1660, հիշատակարան:

<sup>21</sup> Հիշատակարաններից բերված քաղվածքներում նույնությամբ թողել ենք բնագրային սխալները (լեզվական և ուղղագրական):

<sup>22</sup> Գիրք պատմութեանց շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դավրէժացոյ, Ամստերդամ, 1669, էջ 535:

<sup>23</sup> Աստուածաշունչ. Ամստերդամ, 1666—1668, հիշատակարան:



Հիտուսի ազգաբանությունը (Ոսկանյան Աստվածաշունչ)

հասցնելու համար, և Ոսկանը սկսում է աշխատել դրամի պակասը լրացնելու ուղղությամբ:

Սկզբում կիվոռնոյում և ապա Հռոմում Ոսկանը հաջողությամբ չի ունենում թե՛ հայրենակիցների և թե՛ իտալացիների մեջ, բայց երկրորդ անգամ կիվոռնո գալով այնտեղ գտնում է երեք ջուղայացի վաճառականների, որոնք «հայելով ի նուազութիւն Աստուածայնոց կտակարանաց, որ ի մէջ ազգիս հայոց», Ոսկանին տալիս են «առատապես ղծախս դրամոյն»: Այսօր չի կարելի բարի խոսքով չհիշել նաև այս ջուղայացի հասարակ մարդկանց, որոնք էին Ստեփանոս խաննցը, Թեոդորոս Քթոնեցի և Պետրոս Զուղայացին:

Ամստերդամում Կարապետ Անդրիանացին արդեն աշխատում էր Ոսկան Երևանցու հրահանգով: 1662 թվականի վերջերին հասնելով կիվոռնո՝ Ոսկանը նամակ էր գրել Կարապետին, նշելով նրա աշխատանքի ծրագիրը և հորդորելով, որ նա «ըստ կարողութեան իւրոյ զգործարանն ի գործ շարժեսցէ մինչև հասանիլն իմ առ ինքն»<sup>21</sup>:

Ոսկանը Ամստերդամ է հասնում 1664 թվականի վերջերին, երբ Կարապետը տպագրել էր Շարակնոցի մոտ կեսը: Ստանձնելով այս տպագրության ղեկավարությունը՝ Ոսկանը եռանդով տպարանը նախապատրաստում է Աստվածաշնչի հրատարակությանը: Ծարեցու տառերը խոշոր էին, եթե նրանցով տպագրվեր Աստվածաշունչը, ապա ծավալը չափազանց կմեծանար («Գիրք Մատթեոսի յոյժ խոշորք էին և անյարմարք»): Այս տառերը օգտագործելով գրքի էջախորագրերի համար, հիմնական բնագիրը որոշում է շարել Ավետիսի պատրաստել տված տառերով: Ինքն էլ պատվիրում է նոր տառեր՝ տպագրական նոտրդի բոլորագրերի և լուսանցքային ծանոթագրությունների համար («Վասն համաձայնութեան և խորագրութեան»): Այդ տառերը նախ փորձում է՝ օգտագործելով Շարակնոցի վերջում, սկսած «Կանօն Համօրինաց Մարտիրոսաց» բաժնից (էջ 605):

Ոսկանի ձեռքի տակ կային նաև Ծարեցու գնած փայտափորագրությունները, որոնցով պատկերազարդվել էին «Յիսուս Որդի»-ն և Շարակնոցը: Հնարավոր է, որ Աստվածաշնչի համար պակասող որոշ նկարներ Ոսկանն է ձեռք բերում: Շարակնոցի հիշատակարանի վերջում Ոսկանը գրում է. «Զկնի որոյ շնորհօքն Յիսուսի և աղօթիւք ձերօք սկսանելոց եմք զԱստուածաշունչն»: Սակայն դրանից հետո ևս երկու գիրք է տպագրում («Գիրք այբուբենից» և «Քերական

նութեան գիրք»): Ըստ երևույթին, տպագրական արվեստին ավելի հմտանալու նպատակով:

Ոսկանի ամենամեծ աշխատանքն, իհարկե, Աստվածաշնչի բնագիրը տպագրության պատրաստելն էր՝ տնտեսելը, գլուխների բաժանելը, առանձին գրքերն ու գլուխները ըստ Վուլգատայի դասավորելը, հավելումներն ու խմբագրումը և այլն: Այս հսկայական աշխատանքի մի մասն արդեն արված էր հայրենիքում: Ամստերդամում Ոսկանն ավարտում է այդ գործը և 1666 թվականի մարտի 11-ին իր աշակերտներ Կարապետ Անդրիանացու և Օհան Երևանցու հետ սկսում է գրքի տպագրությունը: Որևէ հիշատակություն չկա այն մասին, թե ով է շարել գիրքը: Հիմք կա մտածելու, որ Աստվածաշունչը մեծ մասամբ շարել է Կարապետ Անդրիանացին: Ոսկանը հաջիվ թե արդեն հարկ եղածին չափ հմտացած լինել գրաշարության (շարաբարդության) արհեստում<sup>22</sup>:

Ճիշտ չի լինի մտածել նաև, որ գլխավոր գրաշարը օտարազգի է եղել, քանի որ Աստվածաշնչի շարվածքը բավական գրագետ է և ստիպում է մտածել, որ գլխավոր շարողը լավ հայերեն է իմացել: Օրինակ, «Յիսուս Որդի»-ն բազմաթիվ սխալներ ունի, և ոչ միայն նրա երկրորդ մասը, որ սրբագրում էր քիչ գրագետ Ավետիսը, այլև սկիզբը, որ Ծարեցու սրբագրածն է: Պատճառն ինքը Ծարեցին բացատրում է այսպես. «Ղի օրինակն մի էր և շարողք ֆռանկը, որ ոչ են տեղեակ գրոց մերոց և լեզւաց»: Իսկ 1661—1662 թթ. տպագրված Սաղմոսարանում եղած սխալները Կարապետ Անդրիանացին բացատրում է այսպես. «Ներեսչիք սխալանաց իմոց, ղի անծանոթ էի տպական արուեստիս»: Սաղմոսարանից հետո Կարապետը բավական աշխատել է տպարանում, մանավանդ Շարակնոցի տպագրության վրա և կարող էր այնքան վարժված լինել, որ դառնար Աստվածաշնչի գլխավոր գրաշարը:

Ոսկանյան Աստվածաշունչը, որ բաղկացած է 1462 երկսյուն էջերից (2924 սյունակ), ունի 21,5×13,5 չափսի շարվածք և 159 պատկեր, տպագրվել է 2 տարի 7 ամսվա ընթացքում (1666 թ. մարտի 11-ից մինչև 1668-ի հոկտեմբերի 13-ը): Տպագրությունը վարպետորեն ու խնամքով է կատարված. շատ մաքուր է շարվածքը, հմուտ են պահ-

<sup>21</sup> Շարակնոց, Ամստերդամ, 1664—1665, հիշատակարան:

<sup>22</sup> Հավաստի տեղեկություններ կան, որ Կարապետ Անդրիանացին, այնուհետև նաև Ոսկան Երևանցին հմուտ գրաշարներ են եղել և այդ արհեստը սովորեցրել իրենց աշակերտներին (տե՛ս, օրինակ, 1669 թ. Պետրոս Զուղայացու և 1685 թ. Մատթեոս Վանանդեցու շաղկնոցների հիշատակարանները):

պանված տողերի, սյունակների, խորագրերի միջև տարածությունները, ողջ շարվածքը հաճելի է ընթերցանության համար:

Այսպիսի ծավալ և որակ ունեցող տպագրություն հայերը չէին ունեցել մինչև այդ, ինչպես և շունչեցան դրանից հետո բավական երկար ժամանակ: Հեռավոր Ամստերդամում մի քանի խանդավառ հայորդիներ, կատարելով հայրենիքի պատվերը, կարողացան գլուխ բերել բազմիցս ձախողված և անասելիորեն դժվարին մի գործ: Միաժամանակ նրանք հայկական տպագրության պատմության մեջ դրեցին մի փառազարդ էջ՝ հրապարակ հանելով տպագրական արվեստի այդ հրաշալի գործը: «Տպագրական մամուլն առաջին անգամն էր լույս հանում այն փաստը, որ հայն էլ ընդունակ է երկար ու դաժան աշխատություններով խոշոր հրատարակություններ անել»<sup>26</sup>:

#### Ոսկանյան Աստվածաշնչի տառերն ու պատկերները

Ոսկանյան Աստվածաշնչի մեջ և ընդհանրապես ամստերդամյան Ս. էջմիածնի և Ս. Սարգսի անվան տպարանում օգտագործված տառերի վերաբերյալ շատ տարբեր ու հակասական բաներ են գրվել: Բանասերներին հատկապես հետաքրքրել են Աստվածաշնչի հիմնական շարվածքի տառերը՝ ոչ մեծ, գեղեցիկ բոլորադիր, որով տպագրվեցին նաև ոսկանյան հետագա մի շարք հրատարակություններ:

Որոշ հեղինակներ դրել են, որ այդ տառերը պատվիրել է Ոսկան Երևանցին<sup>27</sup>, Սա Ս. էջմիածնի տպարանի հրատարակություններին, նրանց հիշատակարաններին լավ ծանոթ չլինելու արդյունքն է: Ուրիշ բանասերներ տարրեր ձևով կրկնում են Ոսկանի ասածն այդ մասին (Աստվածաշնչի հիշատակարանում): «սկիզբն արարի տպել գրովքն, դորս Աւետիսն էր յօրինեալ, դի դիրք Մատթեոսին յոյժ խոշորք էին և անյարմարք»: Սրա հիման վրա բանասերները գրում են, որ Աստվածաշնչը ամբողջովին տպագրվել է Ավետիսի հորինած տառերով<sup>28</sup>:

Այժմ ավելի ընդունված է մի այլ տեսակետ, ըստ որի Աստվածաշնչի հիմնական շարվածքի տառերը Մատթեոս Ծարեցու

պատվիրած երեք տեսակ տառերից միայն մի տեսակն է: Օրինակ, Գ. Լեոնյանը գրում է, որ Ծարեցին «Քրիստափոր Վանգիկին»<sup>29</sup> պատվեր է տալիս երեք տեսակի հայերեն տպագրական տառերի մայրեր պատրաստել՝ նպատակ ունենալով առաջին անգամ տպագրել հայերեն Աստվածաշունչ: Պատվիրված տառերից երկու տարում հազիվ մի տեսակը պատրաստ լինելով՝ Ծարեցին տպագրության է հանձնում մի այլ գիրք՝ Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի»-ն: Այս Լեոնյանն ավելացնում է, որ Ծարեցու մահից հետո Ավետիս Ղլիճենցը «նախ վճարում է ձուլարանի պարտքերը, ստիպում է փորագրիչ Վանգիկին ավարտել բոլոր տեսակի տառերի փորագրությունը»<sup>30</sup>:

Նախ այստեղ սաացվում է այնպես, որ Ծարեցին Աստվածաշնչի տպագրությունը չի սկսում միայն այն պատճառով, որ նրա պատվիրած երեք տեսակ տառերից միայն մի տեսակն է պատրաստ լինում: Իրականում Աստվածաշնչի տպագրությունն սկսելը կամ չսկսելը կապված չէ Լեոնյանի բերած պատճառաբանության հետ: Եթե նույնիսկ տոսր տեսակ տառեր լինեին Ծարեցու ձեռքին, միևնույն է նա միանգամից Աստվածաշունչ չէր տպագրի մի շարք պատճառներով, որոնցից են նաև հետևյալները: Ծարեցին փող չուներ: Նա իր բոլոր ձեռնարկումները արել էր պարտքով<sup>31</sup> և անհուսալիորեն թաղված էր պարտքերի մեջ<sup>32</sup>, նրա ձեռքի տակ չկար Աստվածաշնչի խմբագրված և տպագրության պատրաստ բնագիր, Ծարեցին տպագրական ամենահասարակ աշխատանքի փորձ չուներ, իսկ Աստվածաշնչի նման գիրք տպագրելը նրա համար լիովին անհնար կլիներ: «Յիսուս Որդի»-ն, որ իր փոքր ծավալով ու պարզ բնագրով շատ ավելի դյուրին է հրատարակության համար, քան Աստվածաշունչը, սկզբից մինչև վերջ տպագրված է բազմաթիվ սխալներով և ավաղրական այլ արատներով (օրինակ, մի շարք էջեր մաքուր են մնացել, չտպագրված):

Ծարեցին իր հիմնած տպարանի աշխատանքը ոչ մի պարագայում չէր կարող սկսել Աստվածաշնչի տպագրությամբ, թեև տպա-

<sup>26</sup> Առ, Հայկական տպագրութիւն, հտ. 1, Թիֆլիս, 1904, էջ 268:

<sup>27</sup> Օրինակ, Խաչատուր Նորջուղայեցին (տե՛ս «Աղղարա», 1795, էջ 233:

<sup>28</sup> Տե՛ս, սրինակ, Գ. Զարեհանյան, Պատմութիւն հայկական տպագրութեան, Վենետիկ, 1895, էջ 108, Ա. Սարգիսյան, Հոլլանդացի և հայեր, Վիեննա, 1924, էջ 79:

<sup>29</sup> Լեոնյանի գրքում (երկու հրատ. մեջ էլ, Քրիստոֆել Վան Դիկ-ը (կամ Վան Դել-ը) դարձել է Քրիստաֆոր Վանգիկ:

<sup>30</sup> Գ. Լեոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 92:

<sup>31</sup> Տե՛ս Գիւրգ պատմությունաց շարագրեալ վարդապետին Առաքելոյ Դավրէժեցոյ. Ամստերդամ, 1669, էջ 635:

<sup>32</sup> Տե՛ս «Յիսուս Որդի», Ամստերդամ, 1660—1661, հիշատակարան:

րանի հիմնադրման գլխավոր նպատակը, իրոք, այդ գրքի հրատարակությունն է եղել:

Բայց անցնենք տառերի հարցին: Արդյոք ճիշտ է, որ Մարեցին իր պատվիրած երեք տեսակ տառերից միայն մեկն էր ստացել: Հայտնի է, որ Մարեցին 1658 թվականի նոյեմբերի 27-ին պայմանագիր է կնքում էլզեվիրների տպարանի վարպետ Քրիստոֆել վան Դիկի հետ իր տված հայերեն տառաձևերի համաձայն տպագիր տառերի 170 հայր և 240 մայր պատրաստելու վերաբերյալ:

Մենք չենք տեսել այդ պայմանագրի պատճենը: Հստակ հեղինակների (Լեո, Ա. Սարգիսյան, Գ. Լևոնյան, Թեոդիկ) պայմանագրով վան Դիկին պատվեր է տրվել պատրաստելու երեք տեսակի հայերեն տառերի մայրեր՝ «մեծ», «միջակ» և «փոքր չափերով»<sup>33</sup>, իսկ ըստ հոլանդացի Ֆ. Դուրբինգի պատվիրվել են միայն «մեծ» և «փոքր չափերի» տառեր<sup>34</sup> (Դուրբինգը պայմանագրի մասին հառորդում է N. de Roever-ի մի գրքի տվյալներով):

Այսօր տեսնենք ինչ է գրում Մարեցին իր պատվիրած տառերի մասին «Յիսուս Որդի»-ի հիշատակարանում. «Եւ շնորհօք Ամենազօրին Աստուծոյ աւարտեալ կատարեցաք Գ (Յ) ազգ գիր, բոլոր յոյժ կատարեալ քանակութեամբ և որակաորութեամբ զանազանեալ, յորոց մինն և իբրև միջին կերպ է այս զոր տեսանէք առաջի կայդ»: Մարեցին այստեղ պարզ գրում է, որ երեք տեսակ տառեր են պատրաստ եղել (իր կենդանության օրոք), ուստի և այն բանասերները, որոնք գտնում են, թե երեքից միայն մի տեսակ գիրն է պատրաստ եղել Մարեցու կենդանության մեջ, պետք է հերքեն նրա այս գրածը:

Ոսկան Երևանցին մի քանի առիթով է գրում, որ Աստվածաշնչի «գիր»-ը Ավետիսն է պատրաստել տվել: Աստվածաշնչի հիշատակարանում այդ մասին երկու անգամ է ասված. «զոր Աւետիսն էր յօրինեալ» և «նաև այսու բոլորագիր, որ յԱւետէն էր յօրինեալ»:

Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ի (Ամստերդամ, 1669 թ.) հիշատակարանում կարդում ենք. «մանաւանդ, զի

զայս գիրս ինքն (Ավետիսը—Ռ. Ի.) ընչիւք իւրովք է արարեալ»:

Ամստերդամյան տպարանի գրքերի մասին Ոսկանը շատ ավելի հստակ է գրել միևնույն «Գիրք պատմութեանց»-ի ընդարձակ հավելվածում: Մարեցու մասին այնտեղ ասված է. «արարեալ զմի ձեռք գիր, որ երեք ազգ լինի. այսինքն՝ միջագիր, գլխագիր և ծաղկագիր: Սկսեալ զՅիսուս որդի մի...»<sup>35</sup>:

Ոսկանն, ինչպես տեսնում ենք, այստեղ հատ-հատ թվարկում է Մարեցու պատվիրած և նրա կենդանության օրոք պատրաստված երեք տեսակ տառերը: Դրանցից ծաղկագիրը և գլխագիրը այն տառերն են, որոնց այսօր էլ մենք նույն անունով ենք կոչում: Իսկ «միջագիր» կամ «միջին կերպ» ասելով, ինչպես կտեսնենք, այն ժամանակ հասկացել են սոսկ տպագրական բոլորագիր, որ օգտագործվել է գրքի հիմնական շարվածքի համար:

Ինչպես վերը տեսանք, Մարեցին իր հիշատակարանում գրել է. «յորոց մինն և իբրև միջին կերպ է այս զոր տեսանէք»: Սա նշանակում է, որ «Յիսուս Որդի»-ի հիմնական շարվածքը «միջին կերպ»-ի տառերով է կատարվել, այսինքն՝ այնպիսի տառերով, որոնց Ոսկանն անվանում է «միջագիր»:

Արդ տեսնենք, թե «Գիրք պատմութեանց»-ի նույն հավելվածում ինչ է գրում Ոսկանը Ավետիսի տառերի մասին. «նա ևս զգոյս իւր զամենայն տուեալ է ի պարտատեարան և գործարանին տիրեալ մինչև ի հատուցանել պարտուցն հանդերձ տոկոսեօքն. և այսմ այսպէս պատահեալ դրեալ էր առ եղբայրն իւր Ոսկան վարդապետն գալ յառաջեցուցանել զգործարանն. իսկ ինքն ձեռն արկեալ էր յօրինել զմիջակ գիրն. որով տպեցաւ ժամագիր, շարակնոց, Աստուածաշունչ և այլ գրեանք»<sup>36</sup>:

Որոշակի ասված է, որ Ավետիսը վճարել է Մարեցու պարտքերը, ապա նամակով Ամստերդամ կանչել Ոսկանին, և հետո ինքը պատրաստել տվել «միջակ գիր», որով տպվել են ժամագիրը, Շարակնոց, Աստվածաշունչ և մյուս գրքերը:

Պարզ է նաև, որ այստեղ ևս «միջակ գիր» անունով Ոսկանը դարձյալ կոչում է տպագրական բոլորագիրը<sup>37</sup>. միաժամանակ հասկանալի է դառնում, որ «միջակ գիր»-ը կամ «միջագիր»-ը տառերի շարվածքում չէ,

<sup>33</sup> Ա. Սարգիսյան Հոլանդացի և հայերը, Վիեննա, 1924, էջ 70, նաև Առ, Հայկական տպագրություն, հտ. 1, Թիֆլիս, 1904, էջ 259, Թեոդիկ, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1913, էջ 104, Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 104:

<sup>34</sup> Ֆ. Դուրբինգ Հայերեն գրքերի տպագրությունը Ամստերդամում. «Տեղեկագիր» ՀեՍՄ ԳԱ (հաս. գիտ.), 1963, № 2, էջ 84, 86:

<sup>35</sup> Գիրք պատմութեանց շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դավրէժացւոյ. էջ 635:

<sup>36</sup> Նույն տեղում:

<sup>37</sup> Ավետիսի պատրաստած «միջակ գիր»-ը Ոսկանը Աստվածաշնչում, ինչպես տեսանք, կոչում է նաև բոլորագիր (սայսու բոլորագրիս):

քանի որ «Յիսուս Որդի»-ի «միջադիր»-ը կամ «միջին կերպ»-ը ավելի խոշոր է (12 կետաշափից քիչ մեծ), քան Շարակնոցի և Աստվածաշնչի «միջադիր»-ը կամ «միջակ գիր»-ը (10 կետաշափից քիչ մեծ): Այսպիսով, «միջակ գիր», «միջին կերպ», «միջադիր» անվանումները տրվում են տարբեր չափի տպագիր բոլորագրին՝ տարբերելու համար այն ծաղկագրից և գլխագրից (դարձյալ տարբեր չափերի): Երբ Մարեցին դրում է. թե «կատարեցաք Գ ազգ գիր», նա նկատի ունի ամենից առաջ երեք տեսակ գիր (անկախ նրանց չափերից), որոնք պատրաստ են եղել իր կենդանության օրոք:

Որ այդ իրոք այդպես է ցույց տալիս նաև «Յիսուս Որդի»-ի (այն մասի, որ Մարեցին է տպագրել)<sup>38</sup> էջերի քննությունը: Այստեղ իրոք երեք տեսակ գրեր են օգտագործված. ա) խոշոր (74—112 կետաշափի) ծաղկագրեր՝ գլուխների սկզբում, բ) խոշոր հրկաթագիր (20 կետաշափի)՝ գլխագրերի համար և գ) բոլորագիր, այսինքն՝ «միջակ գիր» (12 կետաշափից քիչ մեծ)<sup>39</sup> հիմնական շարվածքի համար: Սրանով հաստատվում է ոչ միայն Մարեցու գրածի («կատարեցաք Գ ազգ գիր») ճշտությունը, այլ նաև Ոսկանի վկայության միանգամայն ստույգ լինելը, այն, որ Մարեցին «արարեալ զմի ձեռք գիր. որ երեք ազգ լինի, այսինքն՝ միջադիր, գլխագիր և ծաղկագիր»: Պարզ է դառնում մանավանդ, որ գրերի այս երեք տեսակը «մի ձեռք գիր» է:

1664—1665 թվականներին նույն տպարանում հրատարակված Շարակնոցի մեջ Մարեցու օրոք պատրաստված այս երեք գրերից օգտագործված է երկու տեսակը՝ խոշոր ծաղկագիրը (մի քանի կանոնների սկզբում իբրև գլխատառեր) և խոշոր երկաթագիրը, իբրև գլխագրեր (այս վերջինը սկսած 457 էջից): Սակայն այս երկու տեսակ գրերը Շարակնոցում հավելյալ են: Հիմնականում այն տպագրված է երեք տեսակ ավելի փոքր չափի գրերով, որոնք են՝ ա) 50 կետաշափի ծաղկագիր, բ) 16 կետաշափի երկարագիր գլխագրերի համար. մինչև 457 էջը միայն այս գլխագրերն են օգտագործված, այդ էջից սկսած սրանց հետ օգտագործված են նաև Մարեցու խոշոր գլխագրերը, գ) 10 կետաշա-

փից քիչ մեծ բոլորագիր կամ միջադիր հիմնական շարվածքի համար: Բացի սրանցից, գրքում կա նաև նոտագիր, որ սկսած 605 էջից օգտագործված է խորագրերի համար:

Այս գրերից նոտագիրը գիտենք, որ Ոսկանն է պատրաստել տվել («իսկ ի հասանելն իմ աստ ձեռնարկեալ ետու քանդակել զնոտր դիրսդ»)՝, միջադիրն էլ ըստ վերը բերված վկայությունների՝ Ավետիսը: Իսկ ով է պատրաստել տվել այս գրերից երկուսը՝ նոր ծաղկագրերը և երկաթագիրը: Լուրջ հիմք կա պնդելու, որ դրանք նույնպես Ավետիսի պատրաստել տվածն են:

Տեսանք, որ Ոսկանը մի «ձեռք գիր» է անվանում Մարեցու պատվիրած երեք տեսակ գրերը՝ ծաղկագիր, երկաթագիր, բոլորագիր. և իրոք դրանք «մի ձեռք» են, քանի որ այդ երեք գրերը իրենց չափերով համամասն են: Եվ ահա նույն հարաբերությունը կա նաև Շարակնոցում գործածված մյուս, ավելի փոքր չափի երեք տեսակ գրերի միջև (գարձյալ՝ ծաղկակիր, երկաթագիր, բոլորագիր), այսինքն՝ սրանք էլ են «մի ձեռք» գիր, սակայն ավելի փոքր չափի: Այս «մի ձեռք» գրերից միայն բոլորագրի կամ միջակ գրի մասին է խոսում Ոսկանը՝ ասելով, որ դա Ավետիսն է «յօրինեալ», այսինքն՝ պատրաստել ավելի: Սակայն հազիվ թե այդ «մի ձեռք» գրից միայն մի տեսակը Ավետիսը պատրաստել տված լինեք, իսկ մյուս երկու տեսակը՝ մի ուրիշ մարդ: Տրամաբանությունն ասում է, որ ինչպես առաջին «մի ձեռք» գիրը միասին պատրաստվեց Մարեցու օրոք, նրա ջանքերով, այնպես էլ երկրորդ «ձեռք» գիրն է միասին պատրաստվել Ավետիսի ջանքերով:

Պայմանականորեն այս երկրորդ «ձեռք»-ի երեք տեսակ գրերը (10 կ. չ. բոլորագիր, 16 կ. չ. երկաթագիր, 50 կ. չ. ծաղկագիր) մենք կոչում ենք Ավետիսի (նկ. 2), ինչպես և նախորդ «մի ձեռք» գրի երեք տեսակը (12 կ. չ. բոլորագիր, 20 կ. չ. երկաթագիր, և 74—112 կետաշափի ծաղկագիր)՝ Մարեցու (նկ. 1):


Ինչո՞վ բացատրել, որ Շարակնոցի սկզբում Մարեցու երկաթագիրը գլխագրերի համար չի օգտագործվում, իսկ 457 էջից, այսինքն, երբ Ոսկանն արդեն Ամստերդամում էր<sup>41</sup>, դրանք խառը գործածված են Ավետիսի երկաթագրի հետ միասին: Պատճառը միայն այն կարող է լինել, որ Ոսկանը

<sup>38</sup> Ըստ «Յիսուս Որդի»-ի հիշատակարանի՝ Մարեցին մահացել է, երբ տպագրված էր գրքի 24 մամուլը կամ 394 էջը (ոչ զգուրդը 38 մամուլ է):

<sup>39</sup> Մարեցու և Ավետիսի տառերի չափերը չեն համընկնում ներկայումս ընդունված հայերեն տառանմուշների չափերին, ուստի Ոսկանյան տպարանում գործածված տառերի մեր նշած չափերը (կետաշափ) մոտավոր են:

<sup>40</sup> Շարակնոց. Ամստերդամ, 1664—1665, հիշատակարան:

<sup>41</sup> Ըստ Շարակնոցի հիշատակարանի Ոսկանը Ամստերդամ է հասել, երբ Կարապետ Անդրիանացի վարդապետը Շարակնոցի տպագրությունը հասցրել էր Համբարձման կանոնին (այսինքն՝ 365 էջին):



## ԳԻՐԻՔ ԸՌԸՔՆԵՐՈՐԴ ՍԸՄ

### Նորին ներսէսի ասացեալ առ

Նկ. 1

Մատթոս Մարեցու տառերը (բնական չափերով). վերնի շարք՝ ծաղկագիր, երկրորդ շարք՝ երկաթագիր, ներքևի շարք՝ բոլորագիր (միջագիր)


գալով Ամստերդամ՝ որոշում է Մարեցու այդ գրերն էլ օգտագործել տպագրվող գրքի մեջ բազմազանության համար: Նկատի ունենանք, որ Աստվածաշնչում Ոսկանն արդեն օգտագործում է Մարեցու բոլոր երեք տեսակ տառերը, Ավետիսի ու իր պատվիրած տառերի հետ միասին:

Ոսկանյան Աստվածաշնչում յոթ տեսակ տառեր կան, դրանք են.

ա) Մարեցու ծաղկագիր. գործածված է Հին Կտակարանի գրքերի, ինչպես և նոր

Կտակարանում Ավետարանների և այլ մասերի սկզբներում, Օրինակ, «Յիսուս Որդի»-ի մեջ 415, 443, 510 էջերին եղած ծաղկագիր Ա-ն (թռչուններ և ձուկ), որ Շարակնոցում նույնպես գործածված է (օրինակ, էջ 50), կա նաև Աստվածաշնչում՝ էջ 50 (Գիրք Ելից), 177 (Գիրք Երկրորդ օրինաց) և այլն:

բ) Ավետիսի ծաղկագիր. նույնպես գործածված է (նախորդի հետ փոխելով) Աստվածաշնչի գրքերի, Ավետարանների և այլ մասերի սկզբներում, ինչպես նաև անվանաթերթին:



## ԶՈՐ ՄԵՔ ԸՌԸՔՆԵՐՈՐԴ

### այլն աւուրց յուռուրս ի բաղաբէ իւր

Նկ. 2

Ավետիս Ղիճեցի տառերը (բնական չափերով). վերնի շարք՝ ծաղկագիր, երկրորդ շարք՝ երկաթագիր (գլխագրեր), ներքևի շարք՝ բոլորագիր (միջագիր)

Բաշտի մասն է  
 Բաշտի մասն է  
 Բաշտի մասն է

### ԼՈՒՍՈՒՄՆԵՐ

Նկ. 3

Ոսկան Նրկանցու Գոսթրգիր

գ) Մարեցու երկաթագիր. օգտագործված է ընագրի մեջ իբրև գլխագրեր, կա նաև անվանաթերթում:

գ) Ավետիսի երկաթագիր. օգտագործված է նախորդի հետ գլխագրերի համար, ինչպես նաև գլուխների համարակալման նպատակով, կա նաև անվանաթերթում:

ե) Մարեցու բոլորագիր կամ միջակ գիր. օգտագործված է էջախորագրերի, լուսանցային ծանոթագրությունների համար, կա նաև անվանաթերթում:

զ) Ավետիսի բոլորագիր կամ միջակ գիր. օգտագործված է իբրև հիմնական բնագրի շարվածք, կա նաև անվանաթերթում:

է) Ոսկանի Գոսթրգիր. օգտագործված է լուսանցային ծանոթագրությունների և մի շարք խորագրերի համար:

Հարց է առաջանում, թե Ավետիսի «մի ձեռք» երեք տեսակ տառերն է՞լ էին մտնում Մարեցու պատվիրած 240 մայրերի մեջ, թե՞ Ավետիսը առանձին պատվեր է տվել:

«Յիսուս Որդի»-ի հիշատակարանի երկրորդ մասում Ավետիսը գրել է. «սորայ յետ աստուածաշնչի գիր պիտի դուս գալ, տիրացուն մեռաւ դեռ Խ (40) կամ Կ (60) գիր չէր փորվել, դեռ ԲՃԻ (220) գիր էլ պիտի փորվել. ես եմ վարձ տալս մինչև ի սուրբ խաչն դուս գուրջայ, թէ վարպետն չի մեռնիլ»:

Ինչ է նշանակում այս 40 կամ 60 գիրը: Որոշ բանասերներ յատեղից եղրակացնում են այն, ինչ արդեն գրել է Գ. Լեոնյանը, որ իբր Մարեցու կենդանության օրոք երեք տեսակ գրերը պատրաստ չէին, այլ պատրաստ էր միայն մեկը:

Մենք հաշվեցինք «Յիսուս Որդի»-ի սկզբի 24 մամուլներում (որոնք տպագրել է Մարեին) եղած առանձին տպատառերի (լիտերերի) քանակը: Ստացվեց հետևյալը.

Բոլորագիր. հաշվեցինք 44 տպատառ, որոնք հետևյալներն էին՝ դասական այբուբենի բոլոր 36 տառերը, ապա նաև օ-ն ու Լ-ը (Ֆ-ն չկար), մի քանի տառեր՝ դ-ն, լ-ն, ջ-ն, -ն երկու տարբերակներ ունեին՝ երկար ու արձ (այսինքն՝ այս տառերից յուրաքանչյուրը երկու տպատառով էր ներկայացված), կային զույգ տառեր, ինչպես՝ մե, մի:

Երկաթագիր (գլխագրեր). կար 37 տպատառ: Գրքի նշված մասում կային այբուբենի

երկաթագիր 34 տառ (նաև 0), չգտանք երկաթագիր Ղ, Ռ, Ի տպատառերը, բայց կային ԱՄ և ՏՐ զույգերը, ինչպես և երկու տեսակ Ա-եր (երկար և կարճ պոչերով):

Այսպիսով, «Յիսուս Որդի»-ի սկզբի մասում մեր հաշված միայն բոլորագիր և երկաթագիր տպատառերի քանակը 81 է:

Գրքի նույն հատվածում հաշվեցինք 3 ծաղկագիր և 12 կետագրական տպատառեր: Ընդամենը գրքի Մարեցու տպագրած մասում հաշվեցինք 96 տպատառ: Սա ամենաժլատ հաշվումն է, մանավանդ, եթե նկատի առնենք, որ գրքի մեր օգտագործած օրինակը պակասավոր էր:

Այդպիսով, այս հաշվումները արել ենք նվազագույն հավաստին գտնելու նպատակով: Մեզ համար անկասկած է, որ «Յիսուս Որդի»-ն սկսելիս Մարեցու ձեռքի տակ եղել են իր «մի ձեռք» տառերից ոչ միայն բոլորագրի, այլև երկաթագրի բոլոր տպատառերը, ինչպես և ծաղկագրի մոտ 20 տպատառ: Մարեցու բոլոր տպատառերը հետագայում գործածված են ամստերդամյան Ս. էջմիածնի և Ս. Սարգսի անվան տպարանի այլ հրատարակություններում: Օրինակ, Շարակնոցում և Աստվածաշնչում մենք գտանք ոչ միայն Մարեցու երկաթագրի վերահիշյալ շորտ տպատառերը (որոնք չէինք գտել «Յիսուս Որդի»-ի առաջին կեսում), այլև Մարեցու ծաղկագրերից ևս 15 տառ, որ չկան «Յիսուս Որդի»-ի մեր քննած սկզբի հատվածում: Հասկանալի է, որ այդ տառերը կարող էին ուղղակի պետք եղած չլինել Մարեցուն՝ «Յիսուս Որդի»-ի իր տպագրած մասում<sup>42</sup> (գրքի Ավետիսի տպագրած մասում Ղ, Ռ, Ի երկաթագրերը կան):

Եվ այդպես, տպատառերի մեր հաշված քանակը (96) իրականից կարող է պակաս լինել, բայց ոչ երբեք ավել: Իսկ այդ քանակը բավական մեծ է Ավետիսի նշածից («տիրացուն մեռաւ դեռ 40 կամ 60 գիր չէր փորվել»)<sup>43</sup>, ըթե նույնիսկ վերցնենք «Յիսուս Որդի»-ի Մարեցու տպագրած մասի միայն մեր հաշված բոլորագիր և երկաթագիր տպատառերի քանակը (81), ապա սա նույնպես նկատելիորեն ավելի է Ավետիսի նշածից:

Ավետիսը, ինչպես տեսանք, բերում է մի այլ թիվ ես, որ ցույց է տալիս, թե որքան տպատառ էր մնացել պատրաստելու. «դեռ

<sup>42</sup> Թերևս գրքի անվանաթերթում գործածված լինեն մի շարք ծաղկագրեր: Երևանի գրադարաններում «Յիսուս Որդի»-ի անվանաթերթ ունեցող օրինակ, ցավոք, չգտանք:

<sup>43</sup> «Դեռ չէր փորվել»-ը, ըստ երևույթին, պետք է հասկանալ այն իմաստով, որ տառերը հալիվ 40 կամ 30 հատ էին, կամ դրանից էլ պակաս:

ԲՃԻ (220) գիր էլ պիտի փորել: Եթե հավատանք Մարեցու և Վան Դիկի կնքած պայմանագրի մասին մեզ տեղեկացնող վերոհիշյալ աղբյուրներին, պատվիրված է եղել 240 մայր տառ: Եվ ահա, ըստ Ավետիսի բեռած թվի (220 գեոչ պատրաստված տպատառներ) այս անգամ էլ ստացվում է, որ ընդամենը 20 տառ է (240—220=20) պատրաստ եղել Մարեցու կենդանության օրոք: Ստացվում է այնպես, որ կա՛մ պայմանագրի մեջ նշված թիվն է սխալ, կա՛մ Ավետիսի բեռած թվերը:

Արդյո՞ք Ավետիսը սխալ հաշիվ է արել. մի՞թե այդպես անփույթ կարող էր վարվել թվերի հետ Զուլայեցի վաճառականը, թե՛ հանելուկն իր ուրույն լուծումն ունի: Առայժմ մենք դժվարանում ենք այս հարցին պատասխանել: Իսկ պայմանագրի մեջ նշված 240 թիվը, որ վերաբերում է Մարեցու պատվիրած տպատառերի մայրերին, լիովին իրական է, ահա թե ինչու:

Ինչպես տեսանք, ըստ Դուրիեզի՝ Մարեցու և Վան Դիկի պայմանագրում խոսք կա երկու չափսի (մեծ և փոքր) տառեր պատրաստելու մասին<sup>41</sup>: Սա, անշուշտ, կարելի է հասկանալ իրեն «երկու ձևեր» տառ (յուրաքանչյուրը երեք տառատեսակից): Դա կնշանակեր, թե Մարեցին է պատվիրել բոլոր վեց տեսակ տառերը, բայց կենդանության օրոք ստացել երեքը (մյուս երեքը ստացել է Ավետիսը): Իրոք, վեց տեսակ մայր տառերի ընդհանուր քանակը կարող էր լինել 240, քանի որ յուրաքանչյուր տառատեսակից պետք է լինեին պատրաստել միջին թվով 40 տպատառ (40×6=240): Սա, իհարկե, մոտավոր հաշիվ է, բայց ճշտին շատ մոտ: Որոշ տառերի ծաղկազրեք կարող էին չպատվիրվել, ինչպես և որոշ դեպքերում էլ միևնույն տառերի տարբերակներ և զույգ տառեր պիտի պատվիրվեին:

Շարակնոցում և Աստվածաշնչում մենք հաշվեցինք Մարեցու և Ավետիսի վեց տեսակ տառերից 231 տպատառ<sup>42</sup> և 13 կետադրերական ու հապավման նշանների տպատառեր, ամբողջը՝ 244, այսինքն՝ մեր հաշված տպատառերի քանակը գրեթե համընկնում է Մարեցու պայմանագրում նշված քանակին (240): Պետք է նկատի ունենալ, որ եվրոպական լեզուներում գործածական որոշ կետադրական նշանների (կետ, ստորակետ, ապաթարց) մայրեր պատվիրելու հարկ Մարեցին

<sup>41</sup> «Տեղեկագիր» շնՍՇ. ԳԱ (հաս. գիտ.), 1963, № 2, էջ 84, 86.

<sup>42</sup> Այդ թվում՝ Մարեցու բոլորագիր—44, երկաթագիր—41, ծաղկագիր—19, Ավետիսի բոլորագիր—48, երկաթագիր—39, ծաղկագիր—40.

ունենր, այդ կետադրական տպատառերն ու կարող էր ավելի էժան գնել որևէ հոլանդական տպարանից<sup>43</sup>: Ուստի մեր հաշված քանակից եթե հանենք մի քանի տպատառեր, կստանանք Մարեցու պայմանագրում նշված թիվը:

Այսպիսով, իրոք պատրաստվել են 240 տպատառերի մայրեր «երկու ձևեր» տառերի համար: Սա նշանակում է նաև, որ պայմանագրում, պետք է որ նշված լինի ոչ թե հրեք, այլ երկու չափսի տառերի 240 մայր պատվիրելու վերաբերյալ: Մինչդեռ մեր մի արք հեղինակների հաղորդածը երեք տեսակ կամ երեք չափսի տառերի 240 մայրերի մասին չի հիմնավորվում «Յիսուս Որդի»-ի, Շս դակնոցի և Աստվածաշնչի մեջ գործածվող տպատառերի իրական տեսակներով: Արդյո՞ք տեղեկությունները իմ բազմաթիվ պայմանագրի մեջ երկու չափսի մայրերի մասին գրածը՝ հենվելով Մարեցու «Գ ազգ գիր» արտահայտության վրա և ոչ ճիշտ մեկնաբանելով այն (որից հետո մյուս հեղինակները կարող էին օգտվել պայմանագրի այդ փոփոխված վերապատմումից):

Հենվելով մեր բոլոր քննությունների վրա՝ Ոսկանյան տպարանի տառերի պատրաստման մասին կարող ենք ասել հետևյալը. Մարեցին էլզեվիրների տպարանի վարպետ Քրիստոֆել Վան Դիկին պատվիրում է «երկու ձևեր» (մեծ և փոքր) տպատառերի մայրեր, յուրաքանչյուր ձևերը երեք տեսակից՝ տալով վարպետին այդ տառերի գծապրուքները, որոնք նա վերցրել էր «Երջանիկ բարունապետին Մոսխես»<sup>44</sup>: Մարեցու կենդանության օրոք Վան Դիկը պատրաստում է «մի ձևեր» տառերը երեք տեսակից: Մարեցին ձևեր է բերում նաև մի քանի կետադրական նշանների և արաբական թվանշանների տպատատի տպատառեր:

Բոլոր այս տպատառերը օգտագործվում են «Յիսուս Որդի»-ի տպագրության համար: Մարեցու մահից հետո Ավետիսը իր դրամով պատրաստել է տալիս երկրորդ «ձևեր» տառ-

<sup>43</sup> Մեր հաշիվների մեջ չենք մտցրել արաբական թվանշանների տպատառերը, որոնք Մարեցին նույնպես պետք է պատրաստի գնած լինի որևէ հոլանդական տպարանից և ոչ թե պատվիրած: Ըստ որում, այդ տպատառերը նա ձևեր է բերել, երբ արդեն տպագրված էին գրքի ութ մամուլները, քանի որ 9-րդ մամուլից էն սկսում գործածվել արաբական թվանշանները իբրև մամուլանիշներ, մինչ այդ մամուլները նշված են միայն հայկական թվանշաններով: Արաբական թվանշաններով էջակալում սկսվում է 10-րդ մամուլից:

<sup>44</sup> Տե՛ս Սաղմոսաբան. Ամստերդամ, 1661—1662, առաջաբան (Հ. Գ. Ջաբրինաբալան՝ Հայկական մատենագիտության, էջ 599):

ուրի երեք տեսակը, Կարապետը պատվիրում է խաղեր Շարակնոցի համար<sup>18</sup>, Ոսկանը տպարանի տառտպաշարը լրացնում է նոտորգրով:

Մնում է պարզել, թե երբ են պատրաստ եղել Ավետիսի տառերը և արդյոք դրանք նույնպե՞ս Քրիստոֆել Վան Դիկն է պատրաստել, թե՞ մի այլ փորագորի: Հնարավոր էր, որ Վան Դիկը տառերի առաջին կեսը պատրաստելուց և դրսւ վարձը ստանալուց հետո՝ հրաժարվել տառերի մյուս կեսը պատրաստել և, հայերի հետ համաձայնվելով, չեղյալ հայտարարել պայմանագիրը (հիշենք, որ հայերը վարձատրությունը ուշացնում էին): Ուսումնասիրողները սովորաբար խուսափում են դրել, թե ով է պատրաստել Աստվածաշնչի գեղեցիկ բուրդագիրը, իսկ հուլանդացի Դուբինդր այդ բուրդագրի մասին գրում է. «գուցե փորագոր է Քրիստոֆել Վան Դիկը թեև դժվար է պնդել»<sup>19</sup>:

1661—1662 թվականներին Ս. էջմիածնի տպարանից լույս ընծայված Սաղմոսարանի հիշատակարանում Կարապետ Անդրիանացին գրում է. «Այլ և յիշեսցիք զհանճարեղ արուեստաւորն զՖոնտիք Քրիստոֆլուն, որ է ազգաւ ալաման, որ և բազմահնար ջանիւ կերպացոյց զպողոզատեայ և պղնձի տիպ տառիցս»<sup>20</sup>, Այստեղ խոսքը տպատառերի հայերի (զպողովատեայ) և մայրեր (պղնձի) պատրաստելու մասին է, բայց ո՞ր տառերի՝ Ծարեցո՞ւ, թե Ավետիսի:

Ծարեցու մասին նույն գրքի առաջաբանում ասված է. «Որ բաղում ջանիւք և երկամբք քանդակել ետ և նորակերտեաց զազնիւ և զպատուական գիրս զայս»<sup>21</sup>: Սրանից երևում է, որ այս Սաղմոսարանը տպված է Ծարեցու տառերով, որոնք պատրաստ էին դեռևս 1660 թվականին (երբ սկսվեց «Յիսուս Որդի»-ի տպագրությունը): Իսկ Վան Դիկի (հիշատակարանում՝ Ֆոնտիք) աշխատանքը սլոգանեղ ո՞ր տառերի պատրաստման կապակցությամբ է գովաբանվում («բազմահնար ջանիւ կերպացոյց») Ծարեցո՞ւ, թե՞ Ավետիսի: Կարասկետ Անդրիանացին կամ Ավետիս Ղլիճենցը չէին կարող այս Սաղմոսարանի հիշատակարանում խոսել Վան Դիկի աշխատանքի վարպետության մասին Ծարեցու տառերի կապակցությամբ, այն պարզ պատճառով, որ նրանք այն ժամանակ, երբ

պատրաստվում էին Ծարեցու տառերը (1658—1660 թթ.) ամստերդամյան հայոց տպարանի և Վան Դիկի հետ որևէ առնչություն չեն ունեցել<sup>22</sup>: Ուրեմն թեև այս Սաղմոսարանը, ըստ իր հիշատակարանի, Ծարեցու տառերով է տպագրված, բայց Վան Դիկի աշխատանքի մասին այնտեղ կարող էր խոսվել ոչ թե Ծարեցու, այլ ուրիշ տառերի պատրաստման կապակցությամբ: Դրանք կարող էին լինել միայն Ավետիսի տառերը:

Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ի հավելվածում Ոսկանը թվարկելով Ավետիսի տառերով տպված գրքերը, ինչպես տեսանք, հիշատակում է՝ Ժամագիրք, Շարակնոց, Աստվածաշունչ: Այս թվարկումը ժամանակագրական կարգ ունի, ըստ որում, Ոսկանը հարկ է համարել միայն մինչև Աստվածաշունչ հրատարակությունը (ներառյալ) թվարկել Ավետիսի տառերով տպագրված գրքերը և այն էլ, ըստ երևույթին, ոչ բոլորը: Համենայն դեպս, հիմք կա մտածելու, որ Ոսկանի թվարկած գրքերից առաջինը՝ Ժամագիրքը, միաժամանակ առաջին դիրքն է, տպագրված Ավետիսի տառերով:

Նախքան Շարակնոցը Ամստերդամում տպագրվել է հինգ հայերեն գիրք, դրանք են՝ «Յիսուս Որդի»-ն, երկու ժամագիրք և երկու սաղմոսարան: Ժամագրքերից առաջինը («Տևոր ժամու»), որ տպագրվել է 1661-ի օգոստոսին, 95 էջանոց մի աղոթագիրք է (Կարճառոտ ժամագիրք), մյուսը, որ տպագրվել է 1662—1663 թվականներին, 624 էջանոց Մեծ ժամագիրք է («Կարգաւորութիւն հասարակաց աղօթից»): Առաջին Կարճառոտ ժամագիրքը տպագրվել է «Յիսուս Որդի»-ից անմիջապես հետո<sup>23</sup> և, անշուշտ, նրա տառերով: Ոսկանը նկատի ունի, անպայման, Մեծ ժամագիրքը, որի տպագրությունը ըստ հիշատակարանի սկսվել է 1662 թվականի օգոստոսի 11-ին, այսինքն՝ անմիջապես հետո այն Սաղմոսարանից, որի մեջ խոսվում է Վան Դիկի կողմից նոր (մեր ենթադրությամբ՝ Ավետիսի) տառերի հայերեն ու մայրերը պատրաստելու մասին: Ուշա-

<sup>18</sup> Տե՛ս Շարակնոց. Ամստերդամ, 1664—1665, հիշատակարան:

<sup>19</sup> «Տեղեկագիր» ՀնՍՀ ԳԱ (հաս. դիտ.) 1963, № 2, էջ 90:

<sup>20</sup> Գ. Զարբեանալյան, Հայկական մատենագիտություն, էջ 600:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 599:

<sup>22</sup> Ծարեցին ըստ «Յիսուս Որդի»-ի հիշատակարանի մահացել է 1661 թվականի հունվարի 22-ին, իսկ Ավետիսը նրան օգնության է հասել քիչ ավելի վաղ (բայց համենայն դեպս ոչ շուտ, քան 1660-ի դեկտեմբերի վերջը), այն է «Յիսուս Որդի»-ի տպագրությունն սկսելուց հետո (այսինքն՝ այն բանից հետո, երբ Վան Դիկը 3 տեսակ տառերն արդեն պատրաստել և հանձնել էր Ծարեցուն):

<sup>23</sup> Ըստ հիշատակարանների «Յիսուս Որդի»-ի տպագրությունը ավարտվել է 1661-ի մայիսի 27-ին, իսկ Կարճառոտ ժամանագրքինը՝ նույն թվականի օգոստոսին:

գրեալ է, որ այս ժամագրքի հիշատակարանում ասված է, որ այն տպագրվել է «նորաշէն տառիւս»։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ ա) 1662 թվականի օգոստոսին Ավետիսի տառերը արդեն պատրաստ են եղել, բ) այդ տառերի մայրերը Ավետիսի դրամով պատրաստել է նույնպես Քրիստոֆել Վան Դիկը՝ դրանով ավարտելով իր այն պատվոթղթունը, որ նա ստանձնել էր 1658-ին՝ Մարեցու հետ կնքած պայմանագրով։

Այս եզրակացությունը ինչ-որ չափով հենված է ենթադրությունների վրա, քանի որ մեր ձեռքի տակ չկան «Յիսուս Որդի»-ի ե Շարակնոցի արանքում Ամստերդամում տպագրված շորս գրքերը, մասնավորապես 1661—1662 թթ. Սաղմոսարանը և 1662—1663-ի Մեծ Ժամագրքը։ Ավետիսի տառերի պատրաստման ժամանակի և նրանց պատրաստող վարպետի խնդիրը վերջնականապես կարելի է լուծել, եթե ձեռքի տակ լինեն վերոհիշյալ շորս գրքերը (կամ նրանց էջերի լուսապատճենները) և, մասնավորապես, եթե հնարավոր լինի ծանոթանալ էլզևիրների տպարանի տառանմուշների այն գրքին, ուր բերված են Քրիստոֆել Վան Դիկի պատրաստած տարբեր, այդ թվում հայերեն բոլոր տառերի օրինակները։ Ըստ տեղեկությունների այդ գիրքը հրատարակվել է Դանիել էլզևիրի այրու կողմից, 1681 թվականին։

Ս. էշմիածնի և Ս. Սարգսի անվան տպարանում, նախքան Շարակնոցի տպագրությունը, հիշյալ Մեծ Ժամագրքից անմիջապես հետո, տպագրվել է մի Սաղմոսարան ևս (տպագրությունն սկսվել է 1664-ի ապրիլի 1-ին)։ Ի՞նչ տառերով է այն տպագրվել։ Այդ ժամանակ պատրաստ էին թե՛ Մարեցու և թե՛ Ավետիսի տառերը։ Մեր ձեռքի տակ այս Սաղմոսարանն էլ չկա, իսկ Ոսկանը այն չի հիշատակում Ավետիսի տառերով տպագրված գրքերի շարքում, թեև հիշատակում է այլ առիթով իբրև Կարապետ Անդրիանացու հրատարակություն. «...սկսեալ զպակասորդ խաղիցն տալ շինել և մինչև ցաւարտումն խաղիցն տպեալ ձեռք մի սաղմոսարան և զկնի զշարականսն»<sup>54</sup>։ Արդյոք Ոսկանը պարզապես մոռացել է «Գիրք պատմութեանց»-ի հավելվածում այս Սաղմոսարանն էլ դնել Ավետիսի տառերով տպված գրքերի մեջ, թե՛ այդ գիրքը Կարապետ Անդրիանացին ինչ-ինչ պատճառներով դարձյալ Մարեցու տառերով է տպագրել և ոչ թե Ավետիսի։ Այս հարցի պատասխանն էլ կօգնի վերոհիշյալ խնդիրը լուծելու գործին։

<sup>54</sup> Շարակնոց, Ամստերդամ, 1664—1665, հիշատակարան։

Որևէ հնարավորություն կա՞, այնուամենայնիվ, մտածելու, որ Ավետիսը իր տառերի համար առանձին պատվեր տված լինի (անկախ Մարեցուց)։ Մեր կարծիքով նման հնարավորությունը բացառվում է։

Ա. Սարուխանը մի վկայություն է բերում, ըստ որի 1666 թ. Ամստերդամում Գաբրիել Գրիգորիա անունով մի հայ Վան Դիկին հայերեն տառերի մի այլ պատվեր է տվել<sup>55</sup>։

Այս անունով անձնավորություն մեզ հայտնի չէ ոսկանյան խմբից, իսկ 1666-ին Ոսկանը կամ նրա օգնականները նման պատվեր չեն տվել։ Կարելի է, արդյոք, ենթադրել, որ վկայության մեջ 1666 թվականը սխալ է բերված 1661-ի կամ 1662-ի փոխարեն, երբ Ավետիսը կարող էր տառերի նոր պատվեր տալ և որ Գաբրիել Գրիգորիան (կամ Գրիգորյանը) մի անձնավորություն է, որ ինչ-ինչ նկատառումներով ինքն է ստորագրել Ավետիսի պայմանագիրը։ Կարծում ենք, որ նման ենթադրության համար հիմք չկա, քանի որ ինչպես վերը փորձեցինք ցույց տալ, Ավետիսի տառերը Վան Դիկը պետք է պատրաստած լինի Մարեցու պայմանագրով, Ավետիսի դրամով։ Սարուխանի բերած վկայության այլ բացատրություն պետք է որոնել։

Մենք երկար կանդ առանք Մարեցու, մասնավորապես Ավետիսի տառերի վրա այն պատճառով, որ դրանք մեծ նշանակություն են ունեցել հայերեն տպագիր տառերի հետագա զարգացման գործում։

Նախքան Մարեցու և Ավետիսի տպագիր տառերը, տպագրություն մեջ օգտագործված են ավելի քան 10 տարբեր հայերեն շարժական տառեր՝ Հակոբ Մեղապարտի (Վենետիկ, 1512), Թեսեսու Ամբրոսիոսի («Introductio»-ի մեջ, Բավիա, 1539 թ.), Արդար Դպիրի (1565—1569 թթ.), Ռոբերտ Գրանթոնի (Հոռոմ, 1579, օգտագործված են նաև Հոռոմի հետագա մի շարք հայերեն հրատարակությունների մեջ), Լ. Թուրնայդերի (Բեռլին, 1583), Հովհ. Տերզնցու (Վենետիկ, 1587 թ.), Հովհ. Քարմատանենցի (Լիով, 1616—1618), Միլանի Ամբրոսյան վարժարանի (Միլան, 1621, օգտագործված են Ֆ. Ռիվոլայի հայ-լատին բառարանում), Փարիզյան (1629, օգտագործված են Ֆ. Ռիվոլայի բառարանի 2-րդ հրատ. մեջ)<sup>56</sup>, Խաչա-

<sup>55</sup> Ա. Սարուխան, նշվ. աշխատութ., էջ 79։

<sup>56</sup> Հնարավոր է, որ Ռիվոլայի բառարանի փարիզյան հրատարակության մեջ օգտագործված լինեն բառարանի առաջին (միլանյան) հրատարակության հայերեն տառերը (մենք բառարանի 1-ին հրատարակությունը չենք տեսել)։



Նկ. 4

Քրիստոֆլ Վան Զիլեմ կրտսերի միևնույն փորագրությունը «Յիսուս Որդու» (աջից) և ոսկանյան Աստվածաշնչի մեջ:

Հովհ. Անկյուրացու (Վենետիկ, 1642—1643), Հովհաննես Զուղայեցու (Լիվոռնո, 1644), Զառնբատիստա Բովիսի (Վենետիկ, սկսած 1660 թվականից)<sup>57</sup>:

Այս տառերից Հակոբինը, Աբգարինը և Հովհաննես Տերղնացունը հար և նման են ձեռագիր տառերի: Թեզեոս Ամբրոսիոսի տառերը իրենց ձևով, ըստ էության, առաջին հայերեն տպագիր տառաձևերն են, բայց շատ հեռու այն տպագիր բոլորագրից, որ ընդունվեց և տարածվեց հայոց տպագրության մեջ: Հայերեն այս տպագիր բոլորագրին փոքրինչ ավելի մոտ են Գրանժոնի տառերը, բայց նրանք էլ սոսկ նախատիպ են այդ տառերի: Կեսարացու տառերը շատ անմշակ են և իբրև տպագիր տառեր՝ անորակ, Ավետիսի տառերը (որոնք սովորաբար կոչվում են ոսկանյան) թե՛ իրենց չափով, թե՛ մանավանդ իրենց

գծագրությամբ հենց այն տառերն են, որոնք սուր Կեսարացու (Ն. Զուղտ, 1641—1647), (կամ որոնց նմանությամբ պատրաստվածները) ընդունվեցին և մեծ տարածում գտան հայոց տպագրության մեջ՝ հասնելով մինչև մեր օրերը (10 կետաշափի հասարակ):

Ոսկանյան տպարանի փակվելուց հետո Կ. Պոլսի, Լիվոռնոյի և Ամստերդամի անունը կրող շատ հրատարակությունների մեջ օգտագործված են Ավետիսի տառերը (նույնությամբ): Երբ Մատթեոս Վանանդեցին Ամստերդամում հղանդացի փորագրիչ Նիկողայոս Քիշին պատվիրեց նոր տառեր, ապա 10 կետաշափի համար իբրև օրինակ նկատի ունեի դարձյալ Ավետիսի տառերը: Վանանդեցիների այդ տառերը շատ նման են Ավետիսի տառերին, ավելի ճիշտ՝ նրանց զարգացած տեսակն են: Իսկ այս տառերի կատարելագործումը գտնում ենք 1756—1757 թվականներին Ամստերդամում՝ փորագրիչ Ֆելչեմանի կողմից պատրաստված տառատեսակների մեջ (Առաքել Պողոսյանի պատվերով)<sup>58</sup>: Այս տառերը հետագայում տեղափոխվեցին Տփղիս և օգտագործվեցին ներ-

<sup>57</sup> Այստեղ չենք հիշատակել նախքան 1660 թ. կատարված այն հայերեն տպագրությունների տառերը, որոնք փայտափորագիր են (շարժական չեն) կամ հավանական է, որ փայտափորագիր լինեն: Զուանբատիստա Բովիսի հայերեն տառերը օգտագործվել են 1660-ից, այսինքն Մարեցու տառերի հետ միաժամանակ:

<sup>58</sup> Տե՛ս «Էջմիածին», 1966, է, էջ 52—53:

սիսյան դպրոցի տպարանում: Իսկ XIX դարի սկզբներին Կ. Պոլսի հայ տառաձուլները մեծ մասամբ ամստերդամյան հայերեն տառերի օրինակով էին պատրաստում իրենց տպատառերը:



Ոսկանյան Աստվածաշնչի նկարների մասին ամենատարբեր, հաճախ իրարամերժ կարծիքներ են հայտնվել: Որոշ հեղինակներ գրել են, որ Ոսկանը այդ նկարները ինքն է պատրաստել տվել Աստվածաշնչի համար<sup>59</sup>: ուրիշները, նկատելով կամ կռահելով, որ Աստվածաշնչի նկարները ավելի վաղ տպագրված այլ գրքերում էլ (ոչ հայերեն) պետք է տպված լինեն, ենթադրել են, թե դրանց տախտակներն է Ոսկանը գնել իր հրատարակության համար<sup>60</sup>: Ամենավերջին հայտնարված տեսակետն այն է, որ այդ նկարների տախտակները Ոսկանը գնել է և առաջին անգամ օգտագործել 1664—1665 թթ. Շարականցում<sup>61</sup>:

Հավանաբար այս կարծիքների հեղինակները ձեռքի տակ չեն ունեցել Ծարեցու հրատարակած «Յիսուս Որդի»-ն կամ անուշագիր են եղել նրա մեջ գործածված նկարների նկատմամբ:

Բանն այն է, որ Աստվածաշնչի մեջ եղած նկարների մի ղղալի մասը կա նաև «Յիսուս Որդի»-ի մեջ, որ ապացույց է, թե այդ նկարների տախտակները Ծարեցու կողմից գնվել են դեռևս այն ժամանակ, երբ Ոսկանը Հայաստանում էր:

Ժիջտ է, Աստվածաշնչում կան մի շարք նկարներ, որոնք «Յիսուս Որդի»-ի մեջ չկան (օրինակ, ավետարանիչների դիմանկարներ), բայց դրա պատճառը կարող է լինել այն, որ այս գրքում ուղղակի հարկ չի եղել դրանք օգտագործելու: Եթե նույնիսկ մտածելու լինենք, թե նկարների տախտակների մի մասը Ավետիսը կամ Ոսկանն են գնել, միևնույն է, Աստվածաշնչի նկարների ընտրության և գնման խնդիրը առնչվում է Ծարեցու հետ, քանի որ ամեն դեպքում նա է առաջինը ընտրել և գնել Քրիստոֆել Վան Զիխեմի փայտափորագրությունները, իսկ Ավետիսը կամ Ոսկանը ամենաշատը կարող էին լրացնել միևնույն փորագրիչի տախտակներով՝ Ծարեցու կողմից արդեն գնված հավաքածուն:

Այս հարցը կարևոր է այն պատճառով, որ Աստվածաշնչի նկարների ընտրության հա-

մար երբեմն գովում, երբեմն էլ մեղադրում են Ոսկան Երևանցուն: Օրինակ, հենց վերջերս Ոսկանը մեղադրվեց անճաշակության մեջ: Վաստակաշատ և հարգելի բանասեր Հ. Քյուրդյանը գրում է. «Տարակուսելի է, որ Ոսկան փայտափորագրական գեղարվեստի ճաշակ և ոմբունում ունեցած ըլլար»<sup>62</sup>, քանի որ իբր Ոսկանն է Վան Զիխեմի նկարները ըստիւլ և գնալ: «Որոշ է, որ 1664-ին Ոսկան Ամստերդամի մեջ իր Շարականցին հրատարակութենեն առաջ կերպով մը ձեռք բերած է 1657-ին հրատարակված «Biblia Sacra»-ի փայտափորագրյալ պատկերները, որոնք գործն էին Քրիստոֆել վան Սիխեմի»<sup>63</sup>:

Իրականում Ոսկանը Շարականցի տպագրությունը սկսելու ժամանակ Ամստերդամում չէր, իսկ երբ եկավ, Շարականցի արդեն տպագրված մասում (մինչև էջ 365) արդեն գրված էին շատ նկարներ: Ըստ որում, այդ նկարները նախքան այդ արդեն օգտագործված էին «Յիսուս Որդի»-ի մեջ:

Եթե նկարների խնդրում անճաշակության հարց կա, ապա այն կարող է վերադրվել միայն Ծարեցուն, որ և ընտրել է Վան Զիխեմի նկարները: Բայց մի՞թե Ծարեցին, որ նկարիչ է եղել, կարող էր անճաշակ ընտրություն անել, և մի՞թե իրոք այդքան վատն են Վան Զիխեմի փորագրությունները: Ավելի հաճախ ոսկանյան Աստվածաշնչի նկարների մասին գովասանք է եղել, իսկ այժմ այդ նկարները համարվում են «գուրկ գեղարվեստական ըմբռնումեն», «ողորմելի օրինակություն»<sup>64</sup>. ասվում է, որ նրանք վնասել են հայ դրամակարչությանը, քանի որ հայ հետագա տպագրիչները օգտագործել են նույն նկարները կամ նրանցից կատարված ընդօրինակություններ: Նկարների փորագրիչի մասին ասվում է. «Քրիստոֆել վան Սիխեմ երեց հանվանն ծանոթ, երկրորդական երրորդական փորագրիչ մըն է»<sup>65</sup>:

Ի դեպ, այս առիթով հիշենք նաև, որ ոսկանյան Աստվածաշնչի նկարների հեղինակ որոշ բանասերներ համարում են Կոռնելիուս Վան Սիգեմին<sup>66</sup>, ոմանք էլ Կառլ Վան Զիխեմին:

Այս հարցում եղած հին և նոր թյուրիմացությունները վերացնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում տալ հետևյալ ծանոթությունը:

<sup>62</sup> «Սիոն», 1966, № 2—3, էջ 109,

<sup>63</sup> Նույն տեղում, էջ 107:

<sup>64</sup> Նույն տեղում, էջ 109:

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 108:

<sup>66</sup> Օրինակ, «Տեղեկագիր», ՀնՍՀ ԳԱ (հաս. գիտ.), 1965, № 1, էջ 32:

<sup>59</sup> Տե՛ս Ա. Սարգսյան, նշվ. աշխատութ., էջ 80:

<sup>60</sup> Տե՛ս, օրինակ, Գ. Լևոնյան, նշվ. աշխատութ., էջ 104—105:

<sup>61</sup> «Սիոն», 1966, № 2—3, էջ 105—108:

Ս. էջմիածնի և Ս. Սարգսի անվան տպարանի հրատարակությունների մեջ օգտագործված բոլոր նկարները (փոքր բացառությամբ) Քրիստոֆել Վան Ջիխեմ կրտսերի (Christofe. Van Sichem) փորագրություններն են, որ կատարված են Ռաֆայելի, Ալբրեխտ Դյուրերի, Հենգրիկ Գուցիուսի և եվրոպական ուրիշ նշանավոր վարպետների հայտնի նկարներից<sup>6</sup>։

16 և 17-րդ դարերում եղել են չորս (կամ երեք) C. Van Sichem նկարիչներ՝ Քրիստոֆել Վան Ջիխեմ երեք, Քրիստոֆել Վան Ջիխեմ կրտսեր, Կոոնելիոս Վան Ջիխեմ և Կառլ Վան Ջիխեմ։ Կարծիք կա, որ այս վերջին երկու անուններով միևնույն անձնավորություն է կոչվել, որը փորագրություններ է կատարել ոչ թե փայտի, այլ պղնձի վրա։ Քրիստոֆել Վան Ջիխեմ երեքը ապրել է 16-րդ դարում Գերմանիայում և ոչ մի առնչություն չունի ոսկանյան Աստվածաշնչի նկարների հետ։ Կա ենթադրություն, որ Վան Ջիխեմ երեքը 17-րդ դարում ապրած Վան Ջիխեմ նկարիչների հայրն է եղել։

Ս. էջմիածնի տպարանում օգտագործված նկարների հեղինակ Քրիստոֆել Վան Ջիխեմ կրտսերը ծնվել է 1580-ական թվականներին (ստույգ թվականը հայտնի չէ), ծագումով եղել է գերմանացի (Քրիստոֆ ֆոն Ջիխեմ)։ 1600 թվականին արդեն ապրում էր Ամստերդամում։ Եղել է հոլանդացի հռչակավոր նկարիչ Հենդրիկ Գուցիուսի լավագույն աշակերտներից։ Հիմնականում զբաղվել է փայտափորագիր նկարչությամբ։ Ունի մի շարք ինքնուրույն գործեր, որոնցից լավագույնները գտնվում են դիմանկարների այն ժողովածուի մեջ, որը լույս է տեսել Ամստերդամում՝ 1609 թվականին (Iconica Naeresiar-charum)։ Քր. Վան Ջիխեմ կրտսերի այլ գործերի շարքում հայտնի են նաև չորս ավետարանիչների դիմանկարները, որոնք և օգտագործված են հայերեն Աստվածաշնչի մեջ։ Քրիստոֆել Վան Ջիխեմ կրտսերը ավելի հայտնի է եղել որպես գրքեր նկարազարդող։ Գրքերի համար նա փորագրություններ արել է ինչպես իր սեփական, այնպես էլ եվրոպական խոշոր նկարիչների, հատկապես Ա. Դյուրերի և մանավանդ իր ուսուցիչ Հ. Գուցիուսի գործերից։ Օրինակ, նրա նկարազարդմամբ է լույս տեսել «Հիսուսի մանկությունը» (1617 թ.), ինչպես և Աստվածաշնչի

մի քանի հրատարակություններ, դրանցից երկուսը տպված Ամստերդամում (1646 թ.), մի նոր Կտակարան, տպված Անտվերպենում (1646 թ.) և այլն։ Շատ շքեղ հրատարակված Biblia Sacra-ն ունեցել է 797 պատկեր, տպված Վան Ջիխեմ կրտսերի փորագրություններից։

Քրիստոֆել Վան Ջիխեմ կրտսերի մահվան թվականը հայտնի չէ, բայց 1646 թվականին նա դեռևս կենդանի է եղել։

Հենց միայն այն բանը, որ Քր. Վան Ջիխեմ կրտսերի նկարները բազմիցս օգտագործվել են հոլանդական առաջնակարգ հրատարակությունների մեջ, վկայում է, որ այդ նկարիչ-փորագրիչը ոչ երրորդական, ոչ էլ երկրորդական վարպետ է համարվել, այլ ժամանակի ամենալավ փորագրիչներից մեկը։

Պարտքերի մեջ խրված Ծարեցին, հասկանալի է, որ պատկերների մեծ ընտրություն անելու հնարավորություն չունեի։ Եվ այսօր անարդար կլինի, եթե չափից ավելին պահանջենք այն անձնուրաց մարդկանցից, որոնք խոշտանգված հայրենիքի համար օտարության մեջ աներևակայելի դժվարություններ հաղթահարելով, իրենց կյանքի գնով հայերեն գրքեր էին տպագրում։ Ու շնայած դրան, նկարիչ Ծարեցին պատկերների հաջող ընտրություն է արել, գնելով Հոլանդիայում ճանաչում գտած վաղափորագրությունները։

Ուշագրություն է գրավում այն, որ Ս. էջմիածնի և Ս. Սարգսի անվան տպարանի հրատարակությունների մեջ հաճախ միևնույն անձի կամ թեմայի վերաբերյալ մեկից ավելի տարբեր պատկերներ կան (բոլորը Քր. Վան Ջիխեմի ստորագրությամբ)։ Օրինակ, Ադամ ու Եվա երեք տարբեր պատկերներ կան (Աստվածաշունչ, էջ 1, Շարակնոց, էջ 252, «Յիսուս Որդի», էջ 382), Հովհաննես Ավետարանչի երկու տարբեր դիմանկարներ կան (Շարակնոց, էջ 105, Աստվածաշունչ, էջ 480), դեղարդահարության երկու նկար («Յիսուս Որդի», էջ 198, Աստվածաշունչ, էջ 565) և այլն։ Պատճառը կարելի է բացատրել նրանով, որ Քր. Վան Ջիխեմը նույն թեմայի վերաբերյալ տարբեր նկարիչների (այդ թվում և իր) գործերից է փորագրություններ արել, ինչպես նաև՝ տարբեր գրքերի համար։

Բանասերները համոզված են, որ հայերի գնած և գործածած փայտափորագրությունները հոլանդացիների կողմից արդեն տպագրության մեջ գործածված տախտակներ են եղել։ Այժմ որոշ փաստեր ստիպում են կասկածելու այս համոզման վրա և ոչ միայն այն պատճառով, որ «Յիսուս Որդ»-ի մեջ, ինչպես և Շարակնոցում ու Աստվածաշնչում, այդ պատկերները բավական թարմ են, առանց

<sup>6</sup> Ուշագրավ է, որ մի շարք նկարիչների անվանատառերը Վան Ջիխեմը թողել է նրանց պատկերներից արած իր փորագրությունների վրա, ինչպես օրինակ AD (Ալբրեխտ Դյուրեր), HG (Հենգրիկ Գուցիուս) և այլն, միաժամանակ դնելով նաև իր CVS-ն։



Նկ. 5

Աղամ ու Եվա միևնույն փորագրությունը տարբեր հրատարակություններում. վերևում՝ Ծարակնոց, Ամստերդամ (\*), 1662, ներքևում՝ ձախից՝ Ծարակնոց, Ամստերդամ, 1702, աջից՝ «Գիրք խոստովանութեանց», Կ. Պոլիս, 1698 թ.

մաշվածքների ու ջարդվածքների: Ավելի ուշադրություն է դրավում մի այլ հանգամանք: 17-րդ դարի 80-ական թվականներին և մանավանդ 18-ի սկզբներին Քրիստոֆել Վան Զիխեմ կրտսերի անվանատառերը (նշանը) կրող միևնույն պատկերները կարելի է գտնել և՛ Ամստերդամի, և՛ Կոստանդնուպոլսի ու Լիվոռնոյի տարբեր հրատարակությունների մեջ: Ուսումնասիրողները սովորաբար ասում են, որ միևնույն փայտափորագիր տախտակները հայ տպագրիչները քաղաքից քաղաք, տպարանից տպարան են փոխադրել: Ընդհանրապես նման փոխադրումներ այն ժամանակներում կատարվել են, սակայն

կան այնպիսի փաստեր, որոնք մի շարք դեպքերում Վան Զիխեմի փորագիր տախտակների տեղափոխությունները բացառում են:

Օրինակ, ինչպես կարող էր պատահել, որ վանանդեցիների գործածած տախտակները Ամստերդամից տարվելին Կ. Պոլիս, կամ Լիվոռնո, ապա նորից ետ բերվելին Ամստերդամ, հետո նորից տարվելին այդ քաղաքները և այսպես շարունակ: Մատթեոս Վանանդեցու 1685 թվականի Շարակնոցում գործածված են Քրիստոֆել Վան Զիխեմ կրտսերի անվանատառերը (CVS) կրող այն պատկերները, որոնք կան ոսկանյան հրատարակություններում: Այդ նույն պատկերներն են օդ-



Նկ. 8

Միննույն փորագրությունը տարբեր հրատարակու թյուններում. վերևում՝ Ծարակնոց, Ամատերդամ (\*), 1692 թ., ներքևում ձախից՝ Ծարակնոց, Ամատերդամ, 1702 թ., աջից՝ «Գիրք մեկնութեան», Կ. Պոլիս, 1700 թ.

տագործված վանանդեցիների 1702 թ. Շարակնոցում, ինչպես նաև Ամատերդամ անունը կրող «Սրբուհույ Աստուածածնի» տաճարանի շարակնոցների բոլոր հրատարակությունների մեջ (1692, 1612, 1618 և այլն): Ահա այդ նկարներից շատերը Վան Զիխեմի նույն անվանատառերով դանում ենք նաև Կ. Պոլսի ու Լիվոռնոյի նույն շրջանի հրատարակություններում: Այսպես, ոսկանյան Շարակնոցի Ագամի ու Եվայի նկարը (էջ 252), որ գործածված է նաև վանանդեցիների ու «Սրբուհույ Աստուածածնի» ամատերդամյան բոլոր շարակնոցներում (օրինակ, վանանդեցիների 1702 թ. Շարակնոց, էջ 252, ինչպես

և 1692 թ. Շարակնոց, էջ 118, 231) կա նաև Կ. Պոլսի հրատարակություններում (օրինակ, «Գիրք խոստովանութեանց» Կ. Պոլիս, 1698, էջ 4): Խաչելուխյան նկարը, որ տպված է ամատերդամյան շարակնոցներում (օրինակ, վանանդեցիների 1702 թ. Շարակնոց, էջ 270) կա նաև Կ. Պոլսի նույն շրջանի հրատարակություններում (օրինակ, «Գիրք Թօմայի Գեմբացույ, Կ. Պոլիս, 1700, էջ 2): Ամատերդամյան շարակնոցներում գործածված «Եւ օրհնէին վերգս նորա» մակագրությամբ նկարը (օրինակ, վանանդեցիների 1702 թ. Շարակնոց, էջ 702, 1692 թ., Շարակնոց, էջ 646) գործածված է նաև ստուգապես Կ. Պոլսում

տպագրված «Գիրք մեկնութեան Յայտնութեանն սրբոյ Յօհաննու» (Կ. Պոլիս, 1700, էջ 6): Ս. Գրիգոր Լուսավորիչ համարվող դիմանկարը (իրականում Ս. Ամրոտսիոսի), որ տպված է ամստերդամյան շարականացներում (օրինակ, 1702 թ. վանանդեցիների Շարականոց, էջ 211) տեղ է գտել Լիվոռնոյի անունը կրող հրատարակության մեջ («Թեոփիլոս, այսինքն խօսակցութիւն», Լիվոռնո, 1701, էջ 4) և այլն: Բոլոր կրկնված նկարները իրարից ոչնչով չեն տարբերվում և բոլորն էլ ունեն Բր. Վան Զիխեմի անվանատառերը:

Աներևակայելի է, որ միևնույն փորագիր տախտակները, սկսած 1685 թվականից, անընդհատ ճանապարհորդած լինեն (հաճախ մեծ արագությամբ) Ամստերդամից Կ. Պոլիս և հակառակը<sup>88</sup>: Արդյոք հնարավոր չէ՞, որ Բր. Վան Զիխեմի անվանատառերը կրող միևնույն պատկերներ մի քանի, կամ մի շարք տախտակներ եղած լինեն: Այսինքն՝ հնարավոր չէ՞ արդյոք, որ այն ժամանակներում վարպետը միևնույն պատկերի մի քանի փորագիր տախտակ պատրաստեր իրարից ոչնչով չտարբերվող: Եթե սա հնարավոր է, ապա հասկանալի է դառնում Վան Զիխեմի անվանատառերը կրող միևնույն պատկերների գործածությունը միևնույն ժամանակամիջոցում, բայց տարբեր, իրարից հեռու քաղաքներում: Այսինքն՝ Վան Զիխեմի միևնույն պատկերների տախտակներ կարող էին գնել տարբեր տպագրիչներ և իրարից անկախ գործածել:

Այս դեպքում հնարավոր է դառնում նաև այն, որ Մարեցին էլ գնած լինի ոչ թե գործածված, այլ թարմ տախտակներ, այսինքն՝ հոլանդական հրատարակություններում ար-

<sup>88</sup> Եթե ընդունենք այն բանասերների պնդումը (Ա. Ալպոյաճյան, Գ. Գալեմսթրայան և ուրիշն.), որոնք 1685-ից հետո Ամստերդամում վանանդեցիների տպարանից անկախ գործած երկրորդ հայկական տպարանի գոյությունը բացառում են և Կ. Պոլսի տպագրություններ են հաշվում Ամստերդամ և Լիվոռնո անունը կրող մի շարք հրատարակություններ, միևնույն է, հարցի էությունը չի փոխվում, այլ ավելի առեղծվածային է դառնում: Ամստերդամի երկրորդ ենթադրյալ հայկական տպարանի («Սրբուհւոյ Աստուածածնի») Շարականոցները շատ նկարազարդ են և զրեթե նույնությամբ կրկնում են վանանդեցիների անվիճելիորեն ամստերդամյան հրատարակությունների պատկերները: Արդ, եթե Ամստերդամի երկրորդ ենթադրյալ հայկական տպարանը չի եղել, և այդ զրեթե տպվել են Կ. Պոլսում, հարց է առաջանում, թե ինչպես են այդպիսի մեծ քանակությամբ (մոտ 50) փորագիր տախտակներ մի քանի անգամ տարվել Կ. Պոլիս և ետ բերվել Ամստերդամ (վանանդեցիներին):



Նկ. 7

Միևնույն փորագրությունը Ամստերդամի Շարակնոցում (1702) և Լիվոռնոյի անունը կրող «Թեոփիլոս, այսինքն խօսակցութիւն» գրքում (1701):

դեն եղած նկարների բոլորովին թարմ տախտակները:

Ինչ էլ որ լինի, կարևորն, իհարկե, այն է, որ Ոսկանյան տպարանը առաջինը մեծ քանակով պատկերներ դրեց իր հայերեն հրատարակությունների մեջ («Յիսուս Որդի»-ի մեջ կա 99 պատկեր, Շարականոցում՝ 49, Աստվածաշնչում՝ 159 (թեև մի շարք նկարներ այս գրքերում կրկնված են): Նախքան այդ, հայերեն տպագիր գրքերում պատկերների քանակը մի տասնյակից չէր անցնում: Ոսկանյան տպարանի օրինակով հայ տպագրիչները սկսեցին առավել պատկերազարդ հրատարակել իրենց գրքերը: Սկզբում մի շարք գրքերի մեջ դրվում էին ոսկանյան հրատարակություններում գործածված նկարները, ապա դրանցից արված արտանկարումներ, հաճախ հայկական որոշ երանգավորությամբ, իսկ հետո ավելի ու ավելի զուտ հայկական ոճի պատկերներ:

**Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի անվան  
տպարանի հրատարակությունները  
(Ամստերդամ, Լիվոնո, Մարսել)**

Մենք ձգտել ենք հնարավորին չափ ճշտել Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի անվան տպարանի հրատարակությունների ցանկը: Բանն այն է, որ մինչև այժմ հրատարակված մատենագիտական ցանկերում տեղ են գտել մի շարք սխալներ՝ գրվել են գրքեր, որոնք այդ տպարանում չեն հրատարակվել, ինչպես և դուրս են թողնվել այդտեղ տպագրված գրքեր, մեծ մասամբ ճիշտ չի տրվել գրքերի տպագրության ժամանակագրությունը: Այսպես, ըստ Հ. Գ. Զարբհանալյանի Ս. Էջմիածնի տպարանից լույս են տեսել՝ 1666-ին երկու սաղմոսարան, 1675-ին՝ Նարեկ, 1678-ին՝ Ակն հոգեկան և Պարտեզ հոգևոր և այլն, մինչդեռ նման հրատարակություններ չեն եղել: Անճիշտ տեղեկություններ ունի նաև Ա. Սարուխանը իր «Հոլանդան և հայերը» գրքում: Ամենից ավելի ստուգված ցանկը Արա Գալստյանի կազմածն է, որ կից է նույն հեղինակի ջատ արժեքավոր հոդվածին, տպագրված «Սիոն» հանդեսի 1966 թ. բացառիկի մեջ (թիվ 2—3): Սակայն այս ցանկում էլ որոշ անճշտություններ ու բացթողումներ են նկատվում: Օրինակ, չեն նշված մինչև 1664—1665 թվականների Շարանկոցը լույս տեսած հինգ գրքերը, չկա 1669 թվականին տպագրված երկու «Տօնացոյց»-ներից մեկը և այլն: 1667-ի մեջ նշված են Ժամագիրք և Գիրք աղօթից իբրև առանձին գրքեր, մինչդեռ այդ թվականին լույս տեսած Ժամագիրքը կոչվում է նաև Գիրք աղօթից, և մեկ գիրքն է երկու դարձել:

Թեև մենք ամեն միջոցով աշխատել ենք մեր ցանկը ստույգ դարձնել, բայց հասկանալի է, որ այնտեղ ևս բացթողումներն ու սխալները բացառված չեն:

Մինչև Աստվածաշունչը (նիրառյալ) տպագրված գրքերի ժամանակագրությունը առավելագույն չափով ստույգ ներկայացնելու նպատակով դրել ենք նրանցից յուրաքանչյուրի տպագրության սկզբի և վերջի թվականները, ամիս-ամսաթիվ (եթե նման տեղեկություններ տրված են այդ գրքերի հիշատակարաններում):

**Ա մ ս տ ե ռ դ ա մ**

1. Ներսէս Շնորհալի՝ Յիսուս որդի անուն: 1660 դեկտեմբեր—1661 մայիսի 27: 614 էջ:

2. Տետր ժամու (Ժամագիրք կարճառօտ): 1661 օգոստոս (ավարտ): 95 էջ:

3. Սաղմոսարան: 1661 դեկտեմբերի 13—1662: 746 էջ (°):

4. Կարգաւորութիւն հասարակաց աղօթից (Ժամագիրք մեծ): 1662 օգոստոսի 11—1663 փետրվարի 12: 624 էջ:

5. Սաղմոսարան: 1664 ապրիլի 1 (սկիզբ):

6. Երաժշտական երգեցմունք հոգևորականք (Շարակնոց): 1664 օգոստոսի 14—1665 նոյեմբերի 1: 779 էջ:

7. Գիրք այբուբենից: Քրիստոնէական: 1666 հունվարի 3—1666 նոյեմբերի 25: 64 էջ:

8. Ոսկան Երեւանցի, Քերականութեան դիրք: 1666 փետրվարի 12 (սկիզբ): 112 էջ:

9. Աստուածաշունչ, 1666 մարտի 11—1668 հոկտեմբերի 13: 628, 834 (=1462) էջ (կանա 8 շհամարակալված էջ սկզբում):

10. Աղօթ մատոյց. եւ Ժամագիրք: 1667: 275 էջ:

11. Գիրք սրբոյն Սաշտոցայ վարդապետի (Մաշտոց): 1667: 2, 315, 68 (=385) էջ:

12. Վարդապետութիւն քրիստոնէական: 1667: 72 էջ:

13. Նոր կտակարան: 1668: 934 էջ:

14. Տօմարաց գիրք և Պարզատօմար: 1668: 36, 260(=296) էջ:

15. Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց որ է Աղուէսագիրք: 1668—1669: 88, 224 (=312) էջ:

16. Առաքել Դավրէթեցի՝ Գիրք պատմութեանց: 1669: 650 էջ:

17. Տօնացոյց: 1669 մարտի 25: 273 էջ:

18. Շրակնոց: 1669 (ավարտվել է 1682—1691 թվականների արանքում):

19. Տօնացոյց: 1669: 272 էջ<sup>69</sup>:

<sup>69</sup> Հնարավոր է, որ այս Տօնացոյց—ը տպագրված լինի Լիվոնոյում, թեև անվանաթերթում Ամստերդամ է նշված (այդ մասին տե՛ս «Տեղեկագիր» ՀեՍՀ ԳԱ (հաս. գիտ.), 1963, № 2, էջ 66—68:

## Լ Ի Վ Ո Ո Ն

20. Մարկեդոս Փալեմիթացի՝ Խոստովանարան և ամբաստանարան: 1669<sup>70</sup>:

21. Ռոբերտոս Բելարմինոս՝ Վարդապետութիւն քրիստոնէական: 1670: 4, 362 (=366) էջ:

22. Պարտէզ Հոգեւոր: 1670:

## Մ ա Ր Ա Ե Լ

23. Գրկուկ կարեւոր (Պարղատոմար, Լուսնացոյց և այլն): 1673:

24. Գրիգոր Նաբեկացի՝ Գիրք աղօթից: 1673: 48 էջ (անավարտ):

25. Գիրք ժամակարգութեան (Ժամագիրք ատենի): 1673—1679: 16, 404 (=420) էջ:

26. Սաղմոսարան: 1673—1674: 416 էջ:

27. Յովնանէս Հովով՝ Համառօտութիւն ճարտասանականի արուեստի: 1674: 4, 154 (=158) էջ:

28. Գիրք այբուբենից: 1675: 94 էջ:

29. Արհեստ համարողութեան: 1675: 4, 151 (=155) էջ:

<sup>70</sup> Այս դիրքը հայտնաբերել է Ալ. Մյասնիկյանի անվան դրաղարանի հայկական մատենագիտութեան բաժնի վարիչ Ն. Ոսկանյանը ԼՎՈՎ քաղաքում:

30. Գիրք վայելուչ և հարկաւոր (Պարղատոմար): 1675: 144 էջ:

31. Գրգուկ կարեւոր հանապազորդեան: 1676:

32. Գիրք սրբոյն Մաշտոցայ վարդապետի (Մաշտոց): 1676: 304 էջ:

33. Նուագարան երանուհւոյ կուսին Մարիամու: 1676: 52, 420 (=472) էջ:

34. Սաղմոսարան: 1677:

35. Ակն հոգեկան: 1683: 133 էջ:

36. Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք: Համառօտ վիպասանութիւն: 1683: 320 էջ:

37. Պարտէզ Հոգեւոր: 1683—1684: 166 էջ:

38. Գիրք ժամանակագրութեան: 1688: 480 էջ:

## Զ մ յ Ո Ո Ն Ի ա

39. Գիրք սրբոյն Մաշտոցայ վարդապետի (Մաշտոց): 1676: 304 էջ<sup>71</sup>:

<sup>71</sup> Որոշ բանասերներ (Ա. Ալպոյաճյանը և ուրիշներ) այն կարծիքն են հայտնել, որ այս Մաշտոցի վրա Զմյուտնիայի անունը իրրեւ տպագրավայր կեղծիք է և որ իրր 1676 թվականին միայն Մարսելում է Մաշտոց տպագրվել: Բայց այս կարծիքը ղեկեւ ապացուցման կարոտ է:

